

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԱՌԿԱԽՈՒԹՅԱՒ ՕՐԻՆԱԹԻԻ ՉԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

ՅՈՒՅԱՐԱՐՆԵՐԸ ՓԱԿԵՅԻՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆ ՏԱՆՈՂ ԲՈԼՈՐ ՄՈՒՏՔԵՐԸ

Ժողովրդային շարժումը եռօրեայ սառած իրականությունն ենք երեկ առաւօտեան կատարեալ աշխուժութեամբ վերադարձաւ փողոց եւ առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ փակեց խորհրդարան տանող բոլոր մուտքերը:

Մենաթիւ ցուցարարները փակեցին խորհրդարան տանող բոլոր ճամբաները՝ նպատակ ունենալով արգելակել գումարումը խորհրդարանի գոյգ նիստերուն, որոնցմէ առաջինին ընթացքին պիտի

ցուցնուր պոլիթիքի ենթարկելու իրենց որոշումը:

Անոնք էին Փաղանգաւոր կուսակցութեան պլոքը, Ժողովրդավարական հանդիպում պլոքը, Զօր հանրապետութիւն համախմբումը, Նախկին վարչապետ Նեժիպ Միքաթիի պլոքը, Մարատա հոսանքի պլոքը, ինչպէս նաեւ Նասրական շարժումի ընդհանուր քարտուղար, երեսփոխան Ռասմա Սաատ, Ազգային երկխօսութիւն կուսակցութեան ղեկավար, երեսփոխան



ընտրուէին խորհրդարանի երկու ընդհանուր քարտուղարները, ինչպէս նաեւ խորհրդարանական յանձնախումբերու անդամները, իսկ երկրորդը օրէնսդրական էր՝ վաւերացնելու համար այնպիսի օրինագիծեր, որոնք պիտի վերածուէին Ժողովրդային շարժումի պահանջները գոհացնող օրէնքներու:

Առաւօտեան ժամը 10:00-ին, Մուսթաքալ պլոքի նախագահ, երեսփոխան Պահիա Զարիրի հաստատեց, որ Մուսթաքալ պլոքը պիտի չմասնակցի խորհրդարանի գոյգ նիստերուն:

Նշենք, որ օր մը առաջ կարգ մը քաղաքական ուժեր, պլոքներ եւ անձնատիրութիւններ արդէն իսկ հաստատած էին խորհրդարանի նիստին իրենց մասնակ-

Ֆուատ Մախլուփի, երեսփոխաններ Միշել Մուաւաթ, Շամել Ռուքոզ, Նամաթ Աֆրամ, Մոհամետ Զապարա, Ֆայսալ Զարամէ եւ Ժամիլ Սեյիտ:

Խորհրդարանի գումարելիք նիստէն շուրջ ժամ մը ետք, խորհրդարանի ընդհանուր քարտուղար Անտան Տահեր յայտնեց, որ խորհրդարանի դիւանը հրապարակած է հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ հետեւեալը. «Նկատի ունենալով երկրին դիմագրուած արտակարգ պայմանները եւ համաձայն խորհրդարանի ներքին կանոնագիրին ու հիմնուելով օրէնսդրական ելքի վրայ, խորհրդարանի մնայուն յանձնախումբերը պիտի շարունակեն գործել նոյն անդամներով եւ նոյն ձեւով»:

Շար.ը՝ էջ 2

«ԱՐՅԱԽԸ ԵՐԲԵՔ ՊԻՏԻ ԶՀԱՄԱՁԱՅՆԻ ՎԵՐԱԳԱՌՆԱԼ ԱՁՐՊԷՅՃԱՆԻ ԿԱԶՄ»

Կ'ԸՍԷ ԶԱԹՈՒԼԻՆ

Ռուսիոյ Տոււայի ԱՊԳ-ի գործերով, երաւիական համարկման եւ հայրենակիցներուն հետ կապերու յանձնախումբի նախագահի առաջին տեղակալ Զոնսթանթին Չաթուլին Ռուսիոյ պետական պատկերասփիւռի կայանի հեռարձակուող «Փոզներ» յայտագիրէն այլ հարցերու կողքին անդրադարձաւ արցախեան հիմնահարցին:

Փոզներ անդրադարձաւ վերջերս Չաթուլինի՝ Արցախի բարեկամներու խորհրդաժողովի ծիրին մէջ Արցախ այցելութեան, որուն պատճառով ազդպէճանական արտաքին գործոց նախարարութիւնը խիստ քննադատութեան ենթարկած էր զինք: Չաթուլին յիշեցուց, որ Փոզներ եւս այդպիսի խնդիրի առջեւ կանգնած էր, որուն ի պատասխան՝ Փոզներ ըսաւ, որ ինք պարզապէս լրագրող է, այլ ոչ թէ բարձրաստիճան պաշտօնեայ:

Անդրադառնալով Արցա-



խի հարցին մէջ իր դիրքորոշումին՝ Չաթուլին նշեց, որ իր տեսակետները Արցախի հարցին մէջ երեկ չեն ձեւաւորուած: «Իմ խորին համոզումն այս հարցին մէջ հետեւեալն է՝ Լեռնային Ղարաբաղի տագնապը կրնայ լուծուիլ այն բանի շնորհիւ, որ այդ հարցին մէջ կայ փոխգիշում: Ամենն առաջ Լեռնային Ղարաբաղի Զանրապետութիւնը, որ ինքն իրեն կը կոչէ Արցախի Զանրապետութիւն, անկիւս ոչ մէկուն կողմէ ճանչցուած է, սա- նային գոյութիւն ունի եւ կ'ապրի, կ'ուզեմ ըսել, որ ան երբեք պիտի չհամա- ձայնի, նոյնիսկ ձեւական ձեւով վերադառնալ Ազըր- պէճանի կազմ:

Շար.ը՝ էջ 3

ՄՈՎՍԵՍ ՅԱԿՈԲԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԱՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՊԵՏ

Հայաստանի պաշտպանութեան նախարարին հրամաններով գորավար-գնդապետ Մովսէս Յակոբեան նշանակուեցաւ պաշտպանութեան նախարարութեան ռազմական վերահիւսկողական ծառայութեան պետի տեղակալ, իսկ գնդապետ Վաչագան Ներսէսեան՝ ռազմական վերահսկողական ծառայութեան գլխաւոր տեսուչ:

Այս մասին դիմատետրի իր էջին վրայ գրած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ բանբեր Արծրուն Յովհաննիսեան:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՎԱՐ ԱՌԱՒ ԻՍՐԱՅԷԼԷՆ ԱՐՉԱԿՈՒԱԾ ՀՐԹԻՌՆԵՐ



Սուրիոյ պետական լրատու գործակալութիւնը՝ ՍԱՆԱ-ն հաղորդեց, որ Ղամասկոսի միջազգային օդակայանին մօտ լսուած են շարք մը պայթումներու ձայներ:

Իսրայէլեան բանակի բանբեր Աւիսայ Ատրահի յայտնեց, որ Երկաթեայ գմբէթ օդային պաշտպանութեան համակարգը Սուրիայէն Իսրայէլի հիւսիսային բնակեցման վայրերուն ուղղութեամբ արձակուած 4 հրթիռներ վար առած է:

Ան անեցուց, որ այդ հրթիռներէն ոչ մէկը ինկած է Իսրայէլի մէջ:

Իսրայէլեան լրատումիչոցնէր իրենց կարգին հաղորդեցին, որ Կոլանի եւ վերին Գալիլիոյ բնակեցման վայրերուն մէջ ահազանգ հնչած է:

Մթնշաղկի եւ այլ բնակեցման վայրերու բնակիչները հաղորդեցին, որ ահազանգներու հնչեցումէն ետք պայթումի ձայներ լսուած են:

ԸՍՏ «ՖՈՔՍ»-Ի

ԻՐԱՆ ՍՈՒՐԻԱՅ ՄԷՁ ՄԵԾ ՈԱԶՄԱԿԱՅԱՆ ՄԸ ԿԸ ԿԱՌՈՒՅԷ



Ամերիկեան «Ֆոքս» պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ Իրան Սուրիոյ մէջ մեծ ռազմակայան մը կը կառուցէ՝ նշելով, որ ատիկա ցոյց կու տայ արբանեակներու ճամբով առնուած լուսանկարները:

«Արբանեակներու «Այ.Ս.Այ.» ընկերութեան լուսանկարած նկարները ցոյց կու տան վերակառուցումը 8 կառուցներու ռազմակայանի մը մէջ, որ անցեալ սեպտեմբերին ենթարկուած էր օդային հարուածի, որուն պատճառով 21 անձ սպաննուած էր», նշեց «Ֆոքս»:

Շար.ը՝ էջ 3

ԱՆԴՐԱՄԱՆԱԿԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՁ ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԵԱՆ ԴԵՍ ՎԵՐՈՅԻ ԿԻՐԱՐԿԱՆ

«ԹՐԱՄՓԻ ՀԵՏ ՀԱՆԳԻՊՈՒՄԷՆ ԵՏՔ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՁ ԲՈԼՈՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԶԱԽՈՂԱԾ ԵՆ»

Կ'ԸՍԷ ԷՐՏՈՂԱՆ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Արդարութեան եւ բարգաւաճում կուսակցութեան նախագահի խորհրդարանական խմբակցութեան նախագահի տեղի ունեցած նիստին ընթացքին անդրադարձած է թուրք-ամերիկեան յարաբերութիւններուն, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան որդեգրած բանաձեւերուն եւ Ծերակոյտին մէջ Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւի քննարկման հարցին մէջ վերջ կիրարկելու: Այս մասին կը հաղորդէ «Միլիթը» օրաթերթը:

Էրտողան նշած է, որ թուրք-ամերիկեան յարաբերութիւններուն մէջ գոյութիւն ունեցող տարաբանութիւնները «արհեստականօրէն ուժեղացուած են Միացեալ Նահանգներու մէջ գործող հակաթիքական շրջանակներու կողմէ»:

Շար.ը՝ էջ 3

ՔԱԹԱՐ ՎԵՐՅՈՒՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՕՆԱԳԻՐԻ ՊԱՀԱՆՁԸ



Պաշտօնական այցելութեամբ Զաթար գտնուող Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան 19 նոյեմբերին հանդիպումներ ունեցաւ Զաթարի Թամիմ Պըն Համատ Ալ Թանի իշխանին, վարչապետ, Ներքին գործոց նախարար Ապուլահ Պըն Նասըր Պին Խալիֆա Ալ Թանիի, Զաթարի հայ համայնքին հետ, ինչպէս նաեւ այցելեց Զաթարի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւն:

Շար.ը՝ էջ 3

ՄԱՂԱԹԷԼԵԱՆ. «ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԱՐԺ ՉԵՆ ՔՆՆԱՐԱՏՈՒԹԵԱՆ»

Ն ա խ ա ր ա Ր Արայիկ Յարութեան այդպէս ալ չհասկցաւ ընտանեկան, անձնական, կուսակցական ու քաղաքական յարաբերութիւններու տարբերութիւնը, այսպէս անդրադարձաւ ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեանը նախօրէին Արայիկ Յարութեանին եւ Երեւանի պետական համալսարանի (ԵՊՀ) դասախօսական կազմի հանդիպման, ուր նախարարը առիթ չէր տուած իր հօրաքրոջ՝ դասախօս Ռիտա Սաղաթէլեանին իր կարծիքը յայտնելու:

Շար.ը՝ էջ 3

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԵՐԿՐՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՈՎ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ 55 ՀԱՋԱՐԷՆ 68 ՀԱՋԱՐ ԴՐԱՄԻ ԲԱՐՉՐԱՅՆԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾԸ

Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ ընթերցումով եւ ամբողջութեամբ ընդունեց «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւորներուն կողմէ ներկայացուած օրէնքի նախագիծը, որով կ'առաջարկուի ամսական նուազագոյն աշխատավարձը 55.000 դրամէն վերածել 68.000 դրամի:

Շար.ը՝ էջ 10

ՀՅԴ ՀԵՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երեկ ՀՀ-ի Հայաստանի երիտասարդական միութիւնը տարածեց հետեւեալ յայտարարութիւնը.

Նոյեմբերի 8-ին տեղի ունեցած ճեպագրոյցի ընթացքում կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Ա. Յարութեանեանը յայտարարեց, որ պատրաստուում է այն արկղերը, որոնք բողոքի շարժումի շրջանակներում տարուել էին նախարարութեան դիմաց, լցնել տասնեակ եւ անէլքրեական գործերով եւ ուղարկել նստացոյցի մասնակիցներին՝ յանձնելով, որ խնդրել է համապատասխան մարմիններին տրամադրել գործերի ցանկերը, որոնցով կը լցունէ դատարկ արկղերը:

Մենք նոյեմբերի 11-ին նամակներ ուղարկեցինք կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան, Հայաստանի ոստիկանութիւն, գլխաւոր դատախազութիւն եւ Յատուկ քննչական ծառայութիւն՝ խնդրելով մեզ գրաւոր պատասխանել՝ արդեօք կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարը համապատասխան տուեալներ տա՞նալու խնդրանքով դիմել՝ Է վերոյիշեալ մարմիններու, թե՛ ոչ:

ՀՀ-ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Շար.ը՝ էջ 10

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԱՌԿԱԽՈՒԵՑԱԿ ՕՐԻՆԱԹԻԻ . . .

Շարունակում Ա. Էջեն

Տահեր աւելցուց նաեւ, որ խորհրդարանի օրենսդրական նիստը եւս առկախում է:

Նշենք, որ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հարցազրույցներու ընթացքին յայտնեց, որ երկրին ելեմտական եւ տնտեսական տագնապը շրջանցելու նախաքայլը կառավարութեան կազմութեան հոլովոյթը արագացնել է:

Պըրրիի պատկերացումով՝ կառավարութիւնը պէտք է բաղկանայ մեծաւ մասամբ մասնագետներէ, որոնց պէտք է միանան սահմանափակ թիւով քաղաքական անձնաւորութիւններ:

Ըստ Պըրրիի, Նոր կազմուելիք կառավարութիւնը պէտք է անմիջապէս սկսի բարեկարգումներ գործադրել, ինչպէս նաեւ անսպաժողովրդային շարժումի պահանջներուն՝ «նկատի ունենալով, որ անոնք բոլոր լիբանանցիներուն պահանջներն են եւ որդեգրուած մեր կողմէ», ըսաւ ան:

Ելեմուտքի նախարարի պաշտօնակատար Ալի Յասան Խալիլ յայտնեց, որ Լիբանան արտակարգ իրավիճակ մը կը դիմագրաւէ՝ աւելցնելով, որ ցուցարարները պէտք է կարենան իրենց ցոյցը շարունակել, իսկ երեսփոխանները՝ հասնիլ խորհրդարան:



Ան նկատել տուաւ, որ եթէ երկրին մէջ բողոքի ցոյցեր կան, անիկա չի նշանակեր, որ երեսփոխանները ժողովուրդը չեն ներկայացներ, որովհետեւ անոնք հարիւր հազարաւոր լիբանանցիներու ջուկներով ընտրուած են:

Խալիլ Նշեց, որ կառավարութեան կազմութեան առումով ոչ մէկ նորութիւն կայ՝ աւելցնելով, որ խորհրդարանի գումարելիք օրենսդրական նիստին ընթացքին պիտի վաւերացուէին ժողովրդային շարժումին պահանջները, ինչպէս՝ փտածութեան դէմ պայքարն ու իւրացուած գումարներու վերադարձը:

Ան աւելցուց, որ ինք համաձայն չէ խորհրդարանական կանխահաք ընտրութիւններ կատարելու:

Նիստերուն յետաձգումէն ետք Խալիլ յայտնեց, որ խորհրդարանի մայրուն յանձնախումբերը կրնան իրենց ընթացիկ աշխատանքները շարունակել: Ան նշեց, որ ելեմուտքի եւ պետական ամավարկի խորհրդարանական մայրուն յանձնախումբը իր կարգին կրնայ շարունակել 2020-ի պետական ամավարկը ուսումնասիրելու աշխատանքը:

Խալիլ Նշեց, որ յանձնախումբերը Նոյնը պահելը նախընթաց մը չէ, այլ՝ սահմանադրական ելք մը:

«Կարելի չէ ըսել, որ երկիրը անիշխանութեան փուլ մուտք գործած է, որովհետեւ խորհրդարանը սահմանադրական հաստատութիւն մըն է, որ իր լիիրաւ գործունեութեան մէջ կը գտնուի», ըսաւ Խալիլ:

ՑՈՑՑԵՐԸ ՅԻՄՆԱԿԱՆԻՆ ՄԵՃ ԿԱՏԱՐՈՒՅԱԼ ԿԵՐՈՆԱԿԱՆ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՃ

Նկատի ունենալով խորհրդարանի նիստը արգելակելու հիմնական նպատակը՝ ցուցարարներուն բողոքի ցոյցը երէկ հիմնականին մէջ կատարուեցաւ Կեդրոնական Պէյրութի մէջ՝ առանց անմասն մնալու ապահովութեան ուժերուն հետ արձանագրուած բախումներէն:



Բայց եւ այնպէս դպրոցներն ու դրամատուները շարունակեցին իրենց աշխատանքային սովորական ընթացքը:

Յիմնական միջադէպը եղաւ այն, որ երեք ինքնաշարժներէ բաղկացած շքախումբ մը ցուցարարներուն մօտէն անցնելու պահուն, վերջիններս փորձեցին կոստեցնել գայն, սակայն շքախումբը յաջողեցաւ իր ճամբան շարունակել, եւ ցուցարարներուն մարդկային շղթան ճեղքելէ ետք ինքնաշարժին մէջ գտնուողները օդին մէջ կրակեցին:

Ժողովրդային շարժումը համակարգող խորհուրդը այս միջադէպ



պին լոյսին տակ սկսաւ աջ ու ձախ ամբաստանութիւններ կատարել, սակայն այդ ամբաստանութիւնները հերքուեցան, եւ այդ պահուն այդ ճամբէն անցնող պատասխանատուին ինքնութիւնը մնաց անորոշ:

Ելեմուտքի նախարարի պաշտօնակատար Ալի Յասան Խալիլ յայտնեց, որ այդ միջադէպը արձանագրուած պահուն ինք պատկե-



րասփիւռի կայաններուն յայտարարութիւն կը կատարէր՝ աւելցնելով, որ ինք առաւօտեան ժամը 8:00-էն ի վեր խորհրդարան կը գտնուի՝ հերքելով այն ամբաստանութիւնները, թէ օդին մէջ կրակողները իր ընկերակիցներն էին:

Յանրապետութեան նախագահութեան հարցերու պետական նախարարի պաշտօնակատար Սելիմ Ժալայաթի իր կարգին հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ պատկերասփիւռի կայաններէն մէկուն հետ՝ խաղաղատելով, որ ինք խաղաղաբէր անձ մըն է եւ նախագահական պալատին մէջ իր աշխատանքը կը կատարէ:

Ան հերքեց այն ամբաստանութիւնները, թէ իր շքախումբն է, որ օդին մէջ կրակած է:



Ժալայաթի ընդգծեց, որ խորհրդարանին աշխատանքները խախտել կը նշանակէ լիբանանեան պետութեան համակարգը փլուզումի առաջնորդել՝ աւելցնելով, որ առանց պետական հիմքեր ապահովելու կարելի չէ ժողովուրդի պահանջներուն ընդամառել:

Նշենք, որ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժալարան Պասիլի տեղեկատուական գրասենեակը կտրականապէս հերքեց օդը կրակելու իմաստով իր շքախումբին ուղղուած ամբաստանութիւնները:

Ցուցարարները երէկ ողողած էին Կեդրոնական Պէյրութի, «Նահար» օրաթերթի, Շաֆիք Ուզզզանի, Չոքաք Էլ Պլաթի, Պապ Իտրիսի եւ Ռիատ Սուլիի ճամբաներն ու հրապարակները:

Կեդրոնական Պէյրութի մէջ բախումներ արձանագրուեցան Ներքին ապահովութեան ուժերուն եւ ցուցարարներուն միջեւ, որովհետեւ ցուցարարները կը փորձէին Նըժմէի հրապարակ հասնիլ՝ բողոքելով խորհրդարանին գումարելիք օրենսդրական նիստին դէմ:

Ռիատ Սուլի հրապարակին մէջ ցուցարարները փշաթելներ կտրեցին եւ փորձեցին մուտք գործել Նըժմէ հրապարակ, սակայն անոնք ետ բշտեցան Ներքին ապահովութեան ուժերուն կողմէ:

Ռիատ Սուլի հրապարակին վրայ գտնուող ապահովութեան ուժերուն օժանդակութեան հասաւ բանակի մէկ ջոկատը: Նոյն հրապարակին վրայ յետմիջօրէի ժամը 3:30-ին դարձեալ արձանագրուեցան բախումներ ցուցարարներուն եւ Ներքին ապահովութեան ուժերուն միջեւ:

Ցուցարարները ընդգծեցին, որ այդ բախումին պատճառը այն է, որ իզական սեռի պատկանող ցուցարար մը խոշտանգումի ենթարկուած է խորհրդարանի ապահովութեան յատուկ ուժերուն կողմէ:

Գիշերուան ժամը 10:00-ին Ռիատ Սուլի հրապարակին վրայ արձանագրուեցան բախումներ՝ ցուցարարներուն եւ Ներքին ապահովութեան ուժերուն միջեւ: Բախումներուն լոյսին տակ ձերբակալուեցան 11 ցուցարարներ:

Բախումներուն ընթացքին արձանագրուեցան 5 վիրաւորներ, որոնք Զաղաքացիական պաշտպանութեան ուժերուն կողմէ փոխարոյնեցան մօտակալ հիւանդանոցներ:

Նշենք, որ Սմայայի Էլիա հրապարակին վրայ տեղի ունեցաւ բողոքի նստացոյց մը, որուն ընթացքին կարգ մը ցուցարարներ փորձեցին ճամբաները փակել: Այս քայլին լոյսին տակ ապահովութեան ուժերը կատարեցին ձերբակալութիւններ:

Թրիփուլիի մէջ ցուցարարները յարձակում գործեցին «Ալֆա» ընկերութեան եւ անոր պաշտօնեաներուն դէմ:


Այս դէպքին պատճառով «Ալֆա» ընկերութեան Թրիփուլիի մասնաճիւղը պաշտօնական հաղորդագրութեամբ մը յայտնեց, թէ պիտի

փակէ իր դռները, մինչեւ որ բացայայտուին իր դէմ գործուած յարձակումին դրդապատճառները եւ մինչեւ որ ընկերութեան ու անոր պաշտօնեաներուն անվտանգութիւնը ապահովող երաշխիքներ գոյանան:

Երեկոյեան ժամը 5:00-ին ցուցարարները բողոքի ցոյց մը կատարեցին Թրիփուլիի քաղաքապետարանին դիմաց՝ պահանջելով լուծել քաղաքին աղբահանումի հարցը:

ՆԱԽԱԳԱՅ ՄՈՐԸ. «ԿԱՐԶԱՊԵՏԻ ՆԵԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԻ ԾԵՂՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՇԵՐՈՒՆ ԴԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՇՈՒԹԵԱՆ ԶԵՐԱԲԵՐՈՂ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՄԱՐՏԵԼԵ ԵՏՔ»

Յանրապետութեան նախագահ գոր. Միշել Աուն երէկ նախագահական պալատին մէջ ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Իան Զուպիչը, որուն հետ ըննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:



Յանդիպումին ընթացքին նախագահ Աուն շեշտեց, որ ինք կը շարունակէ վարչապետի նշանակման իմաստով սկսած իր հանդիպումներն ու հաղորդակցութիւնները՝ աւելցնելով, որ իրեն համար կարեւոր է, որ Նոր կազմուելիք կառավարութիւնը ունենայ քաղաքական համապատասխան հովանաւորութիւն եւ ներկայացնէ երկրին քաղաքական տարբեր ուժերը՝ մասնագետ, առակ եւ պարկեշտ նախարարներու, ինչպէս նաեւ ժողովրդային շարժումի ներկայացուցիչներուն կողմէն:

Նախագահ Աուն Նշեց, որ վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւններուն պիտի հրաւիրէ քաղաքական ուժերուն հետ կառավարութեան կազմութեան վերաբերող ըննարկումները աւարտելէ ետք:

Ան աւելցուց, որ այդ քայլը կը միտի կառավարութեան կազմութեան աշխատանքին դիմաց խոչընդոտները հարթել եւ Նոր Նշանակուելիք վարչապետին աշխատանքը դիւրացնել, որպէսզի երկրին մէջ գործադիր իշխանութեան բաց մը չստեղծուի:

Նախագահ Աուն յայտնեց, որ երկրին տնտեսական եւ ելեմտական կացութիւնը հակակշիռի տակ է՝ Նշելով, որ այդ տագնապին լուծումը աստիճանաբար կը կատարուի: Ան յայտնեց, որ դրամատուները վերադարձած են իրենց աշխատանքին՝ գործի համադրումը կատարելով Կեդրոնական դրամատան հետ:

Նախագահ Աուն դիտել տուաւ նաեւ, որ Լիբանան կառչած կը մնայ Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 բանաձեւին գործադրութեան եւ այդ իմաստով կը գործակցի ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն հետ, հակառակ խորալեւան ուժերուն կողմէ այդ բանաձեւին վերաբերող խախտումներուն եւ լիբանանեան գերիշխանութեան դէմ արձանագրուած ոտնձգութիւններուն:


Զուպիչ յայտնեց, որ ՄԱԿ մօտէն կը հետեւի Լիբանանի իրադարձութիւններուն՝ խոստանալով նախագահ Աունի կեցուածքները փոխանցել ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Մնթինօ Կուլիերեսին եւ Ապահովութեան խորհուրդի անդամներուն:

Նշենք, որ Լիբանանի Անկախութեան տօնին առիթով նախագահ Աուն շնորհաւորական հեռագիրներ ստացաւ արաբական եւ օտար երկիրներու թագաւորներէն եւ նախագահներէն:

Լիբանանի Անկախութեան տօնին առիթով շնորհաւորական հեռագիրներ եւ բարեմաղթութիւններ յղեցին Սեւտական Արաբիոյ Սալման ալըն Ապտէլ Ազիզ թագաւորն ու Մոհամմէտ ալըն Սալման ալըն Ապտէլ Ազիզ գահաժառանգ իշխանը, Եգիպտոսի նախագահ Ապտէլ Ֆաթթաի Սիսին, Թունիսի նախագահ Զայս Սալիտը, Պաղեստինեան իշխանութեան նախագահ Մահմուտ Ապպաաը, Պուրթիկա Ֆատյի նախագահ Ռոշ Մարք Զրիսթիան Զապուրին, Աւստրալիոյ ընդհանուր կառավարիչ գոր. Տէյվիտ Յըրլին եւ Յիւսիսային Զոնթայի նախագահ Զիմ Եոնկ Ընը:

ՄԻՒՖԹԻ ՏԵՐԻՆԱՆ ԿԱՌԱՅ ԿԸ ՄԱՅՑ ԳԱՍՏՆԵՐՄԱՆ ՕՐԵՆԵՒ ԿԱԵՐԱԳՈՒՄԻՆ

Միւս կողմէ, հանրապետութեան միւլֆթի շէյխ Ապտէլ Լաթիֆ Տըրիան Տար Ֆաթուայի մէջ ընդունեց իսլամական արգելափակեալ-



Ներուն հարազատները ներկայացնող պատուիրակութիւն մը, որմէ իմացաւ անոնց դիմագրուած դժուարութիւններուն մասին:

Միւլֆթի Տըրիան յայտնեց, որ ինք առաջինն էր, որ համաներում պահանջած էր: «Այդ պահանջը պիտի մնայ Տար Ֆաթուայի պահանջը, որ պէտք է ներառէ բոլոր բանտարկեալները առանց բացառութեան», ըսաւ ան:

Միւլֆթի Տըրիան յայտնեց, թէ ինք անհրաժեշտ խորհրդակցութիւնները կատարած է կառավարութեան եւ խորհրդարանին հետ, որպէսզի արդարութիւնը գործարդուի եւ անիրաւութեան վերջ տրուի՝ արագացնելով դատավարութիւնները:

Միւլֆթի Տըրիան խոստացաւ համաներումի օրէնքի վաւերացման հոլովոյթին մօտէն հետեւիլ, մինչեւ անոր իրականացումը:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՊՈԼԻՎԻՈՅ ՄԵՋ ԲԱՆԱԿԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

ՀՀԴ Զարաւային Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը 15 նոյեմբերին հրապարակեց սպաներէնով տարածւած յայտարարութիւն մը Պոլիվիոյ վերջին իրադարձութիւններուն առնչութեամբ:

Նշենք, որ կիրակի, 10 նոյեմբերին, երկրի Նախագահ Էվո Մորալէն ներկայացուցած էր իր հրաժարականը ի հետեւանք բանակի հրամանատարութեան հրապարակային «թելադրանք»-ին՝ բացառելու իր մասնակցութիւնը երկրի Նախագահական ընտրութիւններուն: Անցնող 14 տարիներուն, Մորալէն, ընկի այժմարա ցեղախումբէն սերած ղեկավար մը, որ իր քաղաքական ասպարէզը սկսած էր զվաարելով քրեայի տերեւ մշակող գիւղացիներու արհեստակցական միութիւնը եւ պայքարելով անոնց իրաւունքներուն համար, երեք հետեւողական առիթներով ընտրուած էր Նախագահ: Իր եւ իր զվաարած Հեպի ընկերվարութիւն շարժում կուսակցութեան կառավարութեան օրով երկրի սահմանադրութիւնը բարեփոխուեցաւ ընդունելով Պոլիվիոյ բազմազգութեան փաստը: Այդ տարիները եղան Նաե երկրի աննախընթաց տնտեսական բարգաւաճման տարիներ: 2016-ին Մորալէն ուզեց անգամ մը եւս բարեփոխել սահմանադրութիւնը՝ ինքն իրեն թոյլատրելու համար անսահման վերընտրութիւն, սակայն ղեմ յանդիման եկաւ հասարակութեան մերժումին, ինչպէս ի յայտ եկաւ ժողովրդային հարցախոյզի մը ընդմէջէն: Այդուհանդերձ, Մորալէն յաջողեցաւ ընտրական յանձնաժողովը համոզել եւ իր թեկնածութիւնը վաւերացնել: Հոկտեմբեր 26-ին տեղի ունեցած ընտրութիւններուն ինքզինք շատ քիչ թիւով ջուներու տարբերութեամբ յաղթական հռչակելէ ետք, Մորալէն ղեմ յանդիման եկաւ ընդդիմութեան կողմէ արդիւնքի մերժումին եւ քաղաքական տագնապի: Անկարող ելք մը գտնելու, ան հրապարակ եկաւ նոր ընտրութիւններու առաջարկով, որմէ ետք բանակի հրամանատարութիւնը առաւ այդ անուղղակի միջամտութեան քայլը՝ Նախագահը մղելով հրաժարումի: Մորալէսին քաղաքական ապաստան տուաւ Մեքսիքան, որ յատուկ օդանաւ մը տրամադրեց զինք դուրս բերելու համար երկրէն: Իր անվտանգութեան ապահովման համար աշխուժ միջազգային յարաբերական աշխատանք տարաւ Արժանթինի Նորընտիր Նախագահ Ալպերթո Ֆեռնանտեզ, որ 10 դեկտեմբերին իր պաշտօնը պիտի ստանձնէ:

Մորալէսի տեղ ինքզինք երկրի Նախագահ հռչակեց ընդդիմութեան մաս կազմող ծերակուտական ժանին ժաւիտե, առանց խորհրդարանի համաձայնութեան (Մորալէսի հետեւորդ պատգամաւորները մեծամասնութիւն ունին օրէնսդիր մարմինի մէջ): Ժաւիտի Նախագահութեան օրինականութիւնը անմիջապէս ճանցան Պրագիի Նախագահ ժայիր Պոլսոնարո եւ Միացեալ Նա-

հանգներու անոր պաշտօնակից Տանըլտ Թրամի, որ Նաե... ողջունեց զինուորականներու միջամտութիւնը՝ Նշելով, որ անկիւս օրինակ պէտք է ըլլայ Վենեզուէլայի եւ Նիքարագուայի զինուորականներուն:

Իր յայտարարութեան մէջ, Հայ դատի յանձնախումբը Նախ եւ առաջ ամբողջական յանձնառութիւն կը յայտնէ ժողովրդավարութեան, մարդկային իրաւանց յարգանքի եւ քաղաքական տագնապը զուտ պետական հաստատութիւններու ճամբով լուծելու միջոցին: «Կը մերժենք ներքին քաղաքական ոլորտին մէջ զինուորական որեւէ ձեւի միջամտութիւն, որովհետեւ անկիւս պետական հարուածի ձեւ է, ինչպէս որ է պարագան Էվո Մորալէսի հրաժարականին», կ'ըսուի յայտարարութեան մէջ: Ոչ մէկ զինուորական միջամտութիւն կրնայ քաղաքական տագնապի լուծում հանդիսանալ, կը հաստատէ Հայ դատի յանձնախումբը՝ միակ լուծումի ճամբան տեսնելով խաղաղ երկխօսութեան մէջ: Նշելով Լատին Ամերիկայի երկար եւ ողբերգական անցեալը՝ պետական հարուածներու եւ արտաքին միջամտութիւններու, Հայ դատի յանձնախումբը անհրաժեշտ կը գտնէ, որ միջազգային հասարակութիւնը դիրքորոշուի Նման Նախաձեռնութիւններու դէմ եւ մերժէ իշխանութեան գալու ոչ սահմանադրական ամէն ձեւ: Միաժամանակ սակայն, Հայ դատի յանձնախումբին համար «անգագուշութիւն» է իշխանութեան վրայ մնալու ամէն փորձութիւն, ի մասնաւորի երբ անկիւս արդիւնք է քաղաքական շահագործումի եւ իշխանութիւններու բաժանման սկզբունքի խախտումի: Իշխանութեան վրայ յարատեւելու արդիւնքը, «ինչպէս մեր տարածաշրջանի նորագոյն պատմութեան փորձը ցոյց կու տայ, ո'չ միայն հասարակութեան կարեւոր հատուածի մը ընդվզումն է, այլ Նամանաւանդ՝ տնտեսական բարգաւաճումը, քաղաքական բազմազանութեան ամրագրումը եւ ընկերային արդարութեան յառաջընթացը կասեցնելու վտանգ»: Այդ բոլորը, կը վկայէ յայտարարութիւնը, «անժխտելի ձեռքբերումներ են Պոլիվիոյ մէջ անցնող 14 տարիներուն»:

Հայ դատի յանձնախումբը դիտել կու տայ, որ անցնող 15 տարիներուն Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման հոլովոյթը մեծ յառաջխաղաց ունեցած է Լատին Ամերիկայի մէջ ի հետեւանք ժողովրդավարութեան, բազմազանութեան եւ մարդկային իրաւանց յարգանքի ոլորտին մէջ արձանագրուած յառաջընթացին: «Այս իսկ պատճառով կը մերժենք ամբողջատիրական վարքագիծի, խտրական ելոյթներու, արտաքին միջամտութեանց եւ սահմանադրական կարգի խախտման ամէն վերադարձ», կը կարդացուի յայտարարութեան մէջ, որ կ'աւարտի զօրակցութիւն յայտնելով Պոլիվիոյ ժողովուրդին, ի խնդիր տագնապի խաղաղ լուծումին:

ՔԱԹԱՐ ՎԵՐՑՈՒՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ...

Շարունակուած Ա. Էջնի

Թամիմ Պըն Համատ Ալ Թանի իշխանը լուսարձակի տակ առաւ երկու երկիրներուն շատ լաւ յարաբերութիւնները:

Նախագահ Սարգսեան շնորհակալութիւն յայտնեց իշխանին՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներուն համար Զաթար մուտքի արտօնագիրի պահանջի չեղեալ նկատման համար, ինչպէս Նաե Զաթարի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան բացման ցուցաբերած գործուն աջակցութեան համար: Նախագահը վստահութիւն յայտնեց, որ մուտքի արտօնագիրներու պահանջի չեղեալ նկատուիլը դրականօրէն պիտի ազդէ տնտեսական, մշակութային, գիտական, կրթական եւ յատկապէս զբոսաշրջական կապերու հետագայ խթանման վրայ:

Հայաստանի Նախագահին ու Զաթարի իշխանը ընդգծեցին երկու բարեկամ երկիրներուն միջեւ փոխադարձ գործակցութեան մեծ ներուժը, յարաբերութիւններու ընդլայնման ու ամրապնդման կարեւորութիւնը: Իբրեւ համագործակցութեան հիմնական ուղղութիւններ՝ անոնք անդրադարձան առողջապահութեան, կրթութեան, գիտահետազոտական ոլորտներուն, ինչպէս Նաե Տոհայի մէջ ուսանելու կարելիութեան:

Նախագահը ընդգծեց գիտական, կրթական եւ արհեստագիտական մարզերուն մէջ գործակցութեան մեծ ներուժի առկայութիւնը եւ այս ժիրին մէջ արդէն իսկ ձեւաւորուած համաձայնութիւնները:

ՄԱՂԱԾԷԼԵԱՆ. «ԱՅՍ ...»

Շարունակուած Ա. Էջնի

«Այս ամբողջ ընթացքին հարցի բովանդակութեան անդրադառնալու փոխարէն փորձեց անձնաւորել, կուսակցականացնել, պիտակաւորել պայքարը եւ պետական համալսարանի վարիչի պարզ հարցումէն ջղայնացաւ ու հարցը տեղափոխեց բոլորովին այլ հարթութիւն: Հօրաքոյրս կուսակցական չէ, ԵՊՀ-ի պատասխանատու վարիչներն է, ու յայտնի է իր քաղաքացիական դիրքորոշումով, այդ կարգին Նաե 2018-ի գարնան, երբ միացած էր իր ուսանողներուն», ըսաւ Իշխան Սաղաթէլեան:

Նշենք, որ դասախօսներուն հետ հանդիպումին Նախարարը յայտնած էր, թէ փտածութեան հոլովոյթը բացայայտելը բաւական բարդ է, եւ՝ դիմելով ԵՊՀ-ի դասախօս Ռիտա Սաղաթէլեանին, ըսած էր. «Բայց ձեր եղբոր տղուն կուսակցութիւնը անպարտական մը ստանայ այդ արկղներով քրէական գործերը: Հիմա վերջ հարցումը ըրած եմք, կը ստանայ Նաե պատասխանները»:

Երբ դասախօսը փորձած էր հակադարձել Արայիկ Յարութիւնեանին, վերջինս արձագանգած էր. «Բարի եղէք, լսեք մինչեւ վերջ, եթէ նոյնիսկ ատիկա ձեզի եւ ձեր քաղաքական խումբին համար հաճելի չէ»:

Իշխան Սաղաթէլեանի համաձայն, դժբախտաբար, այս իշխանութիւնները վարժ չէն քննադատութեան, իսկ զիրենք քննադատողներուն հետ կը խօսին սպառնալիքով եւ լարուածութեամբ՝ փորձելով վախցնել զանոնք: «Բայց չեն հասկնար, որ գործ ունին Դաշնակցութեան հետ», շեշտեց Սաղաթէլեան:

Պատասխանելով այն հարցումին, որ ասիկա արդեօք փո'րձ է Նախարարին հրաժարականը պահանջողները վախցնելու՝ Իշխան Սաղաթէլեան ըսաւ. «Դաշնակցութեան փորձած են լռեցնել կայսրութիւններ, փապետութիւններ, 130 տարի փորձած են ինչ որ բան ընել: Մեր պայքարը անձնական չէ, մեր երիտասարդները կը պայքարին կրթութեան, գիտութեան ու մշակոյթի ոլորտին մէջ տարուող ապագային քաղաքականութեան դէմ: Այս ընթացքին երբեք ոեւէ դաշնակցական չէ վիրաւորած Նախարարը, որովհետեւ ասիկա ձեզի համար սկզբունք է», երգափակեց Սաղաթէլեան:

«ԱՐՑԱԽԸ ԵՐԲԵՔ ...»

Շարունակուած Ա. Էջնի

Այդ շրջանները 7-ն են, այս պարագային խօսքը 5-ի մասին է, որովհետեւ 2-ը՝ Զարվաճադի եւ Զաշաթադի շրջանները կ'ապահովեն Հայաստանի հետ կապը»:

Անդրադառնալով արցախեան տագնապի հարցին մէջ Ռուսիոյ պաշտօնական տեսակետին՝ Չաթուլին Նշեց, որ Նախ կողմերը պէտք է համաձայնին առանձին, եւ երկրորդ՝ այս հարցը պէտք չէ լուծուի զինուորական ճամբով: «Ցաւօք, Ազրայէճան օրէ օր կ'աւելցնէ իր զինուորական ծախսերը եւ հռետորաբանութիւնը: Եւ եթէ կը յիշեք՝ ապրիլին սանձագերծուեցաւ 5-6 օրուան պատերազմ մը, որ յանգեցուց երկու կողմէն ալ մեծ թիւով կորուստներու», աւելցուց ան:

Ինչ կը վերաբերի իր Արցախ այցելութեան ազրայէճանական հակազդեցութեան, Չաթուլին Նշեց, որ իրեն համար զարմանալի է այդ ամէնը, որովհետեւ ազրայէճանցիներու «աւագ եղբայրները»՝ թուրքերը, 1974 թուականին բռնագրաւած են Կիպրոսի մէկ մասը, սակայն թէ՛ Կիպրոսի Հանրապետութեան, թէ՛ թրքական Կիպրոսի քաղաքացիները կրնան հանգիստ երթալ-գալ, եւ ոչ ոք աղմուկ չի բարձրացներ:

ԻՐԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ...

Շարունակուած Ա. Էջնի

Ամերիկեան պատկերասփիւռի կայանին համաձայն, ըստ լուսանկարներուն, շէնքերը բաւարար են պահելու բեռնակառքեր եւ մեծաթիւ սարքեր ու զինամթերք, ինչպէս Նաե ռազմակայանին երկու կողմերը գոյութիւն ունին անցարգելներ եւ մեծագոյն պահեստանոցներուն տակ ներքին փապուղիներ:

Ըստ «Ֆոքս»-ի Նախկին մէկ զեկուցումին, Սուրիոյ մէջ Իրանի նոր ռազմակայանին մէջ պիտի տեղակայուին հազարաւոր զինուորներ եւ ուժեր: Չեկուցումը կը Նշէ, որ ասիկա Սուրիոյ մէջ Իրանի կառուցած մեծագոյն ռազմակայանը պիտի ըլլայ, եւ Իրաքի հետ սահմանին մօտ գտնուող ռազմակայանի կառուցումը վստահուած է Իրանի Յեղափոխական պահակազուկի Զուտ ջոկատին:

«ԹՐԱՄՓԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԵՆ ...»

Շարունակուած Ա. Էջնի

Ըստ Թուրքիոյ Նախագահին, իրենց երկիրներու յարաբերութիւններու վատթարացման ուղղուած քայլերու իրական բնոյթը բոլորէն լաւ կը տեսնէ Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամի, ատոր շնորհիւ ալ իրենց հանդիպումին ժամանակ իրենց «ապացուցած» են, որ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան կողմէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի որդեգրումը «անարդար է եւ կը հակասէ պատմական ճշմարտութեան»:

Երտողան Նաե յայտնած է, որ իրենց հանդիպումին իբրեւ արդիւնք «Ծերակոյտին մէջ գոյութիւն ունեցող հայկական պնդումներու մասին բոլոր քննարկումները ձախողած են», եւ **վերջ** կիրարկուած է:

ՄԱՀԱԶԴ

Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ թաղական խորհուրդը, տիկնանց յանձնախումբը եւ դարաց դասը կը գումեն տիկնանց յանձնախումբի երկար տարիներու բազմա-վաստակ վարչական անդամին՝

ՖԻԼՈՐ ԻՆՃԷԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 18 նոյեմբեր 2019-ին:

**Բարձր իմաստութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

**2օն
Կոմիտաս Վարդապետի Մննդեան
150-ամեակին**

**Ելոյթ կ'ունենայ
ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԵԼԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱՆՈՒՄԸ**

**Խմբավարութեամբ
ՊՈԶ. Տ. ՉԱԼԵՆ ՎՐԳ. ՆԱՃԱՐԵԱՆԻ**

**Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 13 Դեկտեմբեր 2019-ի
երեկոյեան ժամը 8:00-ին, Սրբ. Վարդանանց եկեղեցւոյ մէջ:**

ՀՐԱԻՐ

www.armenianorthodoxchurch.org

Shnorhali Choir

ԱՐՑԱԽԵԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌ

ԱՐՑԱԽԵԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՁԵՆԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՅԱՆՆԵՐՈՒ ՎԱՃԱՌԸ

**Օրհնութեամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ
գերօ. Տ. ՆԱՐԵԿ ԱՐԵՇՊԻՍԿՈՊՈՍԻՆ
Նախագահութեամբ՝ ՊՈՐԸ ՀԱՄՈՒՄԻ ԵՄԴԱԵՍԴԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԻՆ
Կազմակերպութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԻ «ԱՐՑԱՆ ՖՈՒՏ»-ԻՆ**

**ՈՒՐԱԲ, 29, ԾԱԲԱԲ, 30
ՆՈՅԵՄԲԵՐ ԵՒ ԿԻՐԱԿԻ,
1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019-ԻՆ**

**Ցուցահանդէսի պաշտօնական
բացում՝ ուրբաթ, 29 նոյեմբեր
երեկոյեան ժամը 7:30,
«Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահ:**

**Ցուցահանդէսը բաց կը մնայ
շաբաթ, 30 նոյեմբերին եւ
կիրակի, 1 դեկտեմբերին,
ժամը 10:30-էն 8:00:**

Ծանօթ.-
- Ցուցահանդէսին հասոյթը ամբողջութեամբ պիտի տրամադրուի
- «Արցախ ֆոնտ»-ի ծրագիրներուն:
- Գեղարուեստական յատուկ յայտագիր՝ շաբաթ, 30 նոյեմբեր եւ
կիրակի, 1 դեկտեմբեր 2019-ին, կեսօրէ ետք:

Հրաւիր

ՏԵՍԱԿԷՏ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ՝ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱՅՈՒՄԻ ԱՍՏՂԱՖԻԶԻԿՈՍ ԿԻԶՈՐ ԴԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ «ԿՏԱԿԸ»

«Ինձ յաջորդող սերունդներին, թոռներին, ծոռներին կտակում եմ տիրապետել հայոց լեզուին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից՝ անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արիւնը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արին, այլ՝ գաղափարներ, եւ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցութեամբ իւրաքանչիւր սերունդ պարտաւոր է սովորեցնել յաջորդին հայոց լեզու: Գիտցեք, որ իմ կեանքի ամենամեծ երջանկութիւնը եղել է ու կը մնայ, քանի ապրում եմ, հայոց լեզուին տիրապետելը: Ցանկանում եմ երջանկութիւն բոլորիդ»:

Վ. ԴԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Երբ թշնամին չի յաջողիր դուրսէն հարուածել, կը դիմէ դաւադրութեան: Կը կաշառէ այնպիսի պաշտօններու վրայ գտնուողները, որոնց միջոցով հասանելի կ'ըլլայ առաջադրուած գերագոյն նպատակ մը: Այս պատեհապաշտօրէն ծրարութեան ու գործադրութեան փուլ հասած ռազմավարները, մանաւանդ՝ անհեռատես քաղաքականութիւն վարող պաշտօնատարներու համար, «իմաստուն փրկիչներ»-ու դիմակ հագած՝ կը կաշառեն Նոյնիսկ իրենց իսկ մայրերը՝ իրենց նպատակին հասնելու համար: Կը կաշառեն միլիառներու համարող աներեւակայելի գումարներով՝ կարենալ տիրելու համար համաշխարհայնացմամբ բոլորը հաւասարեցընող այս անմշակոյթ, անգոյն ու անհրապոյր աշխարհին:

Եւ այս կ'ընեն ո'չ միայն գումարներով, այլ՝ «յառաջդիմական այնպիսի եղծուած գաղափարախօսութեամբ, իմա՝ իբր թե՛ **մոտենիկացման** համար ճամբայ ելած, որեւէ նորակազմ կամ «ջարդ ու աներ տեսած երկրի» այս կամ այն տկարութիւնը, դժուարութիւնները սրբագրողի դերով, աշխարհի տնտեսութիւնը իրենց ւախերուն մէջ պահածներու օտար բանակով, որոնք միջոցներուն մէջ տարբերութիւն չեն դրած ու պիտի չի դնեն երբեք, որպէսզի հասնին իրենց նպատակին, եւ ոչ՝ իրենց յայտարարածին:

Այս պարագային, Կարեն Սիմոնեանի խօսքերով, «Ազգային լեզուի եւ ուղղագրութեան նկատմամբ ունեցած վերաբերմունքն է այն եզակի նախապայմանը, որ կարող է բացայայտել պետական իշխանութեան ճշմարիտ նուիրուածութիւնը ազգային գերագոյն շահին կամ, հակառակը, կարող է մերկացնել օտարի հետ եւ օտարի շահերին ծառայելու նրա պատրաստակամութիւնը» (տե՛ս Կարեն Ա. Սիմոնեան, «Կրօնի յոյժ գաղտնի փաստաթղթերից մի քանիսը», Երեւան, «Նախիջեան» հրատ. 2003): Այսօրեան կրթութեան նախարարին առած «քայլը» համագօր չի՞ հնչեր այս Նոյն ռազմավարութեան, որուն կրողն է ինքը, պարոն Արայիկ Յարութիւնեանը, իր սովետականութեան պատկանողի օրերէն ի վեր, այսինքն՝ ազգի մը մշակութային ողնայարին՝ մայրենի լեզուին ողնջացումը իր հոգեխառնութեան մէջ ձուլած, հոն, անոր հանդէպ անտարբերութիւն մշակած ազգակործան այս քայլով:

Չայաստանի առօրեայ լեզուին մէջ լողացող «**մոտենիկացում**» ըսուածը ոչ այլ ինչ է, քան՝ գետնին հաւասարեցումը, չեզոքացումը ոչ միայն մեր, այլեւ այնպիսի հարուստ մշակութիւններու, որոնց յարատեւումը կը սարսափեցնէ «**մոտենիկացցիայի**» ջահակիրներու փաղակսը, որ օր մը չէ օր մը կրնալ աշխարհին պարզել այդ քարոզուածին ախտ մը ըլլալը՝ մերկացնելով անոնց ողնջութիւնն ու աշխարհատիրակալութիւնը իբրեւ թիրախ ընտրողներուն իսկական դէմքերն ու ւախորժակները:․

Դժբախտաբար մեր «Նոր քայլ արած» իշխանաւորները գաղափար ունիին՝ արդեօք 104 տարեկան սփիւռքի պատմութեան,600 տարուան ստորկութեան մէջ ողնայար պահող արեւմտահայութեան մասին, թե ի՞նչ կը նշանակէ նախընտրել, ե՛ւ լեզու, ե՛ւ կրօն, հայու արժանապատուութիւն պահպանելու համար քաշկուտել անապատի աւազներուն մէջ՝ Ներքան պատռելով, քան՝ հաւատափոխ ըլլալ, ձեր լեզուով քսած՝ կաշի փրկելու համար:

Ոչ ոք կ'ականջալէ, որ կարենայիք ամէն բան մէկ տարուան ընթացքին հասցնել հոն՝բոլորին համար ցանկալի «ամենայն փրկիչ» ապահովութեան, եւ այս՝ ամէն ծիրէ ներս: Սակայն վստահ չեմք, որ դուք ձեր որեւէ կեցուածքով չէիք կրնար դաւաճանել լեզուին՝ մեր լեզուի բարգաւաճման, զարգացման ու զայն մաքրամաքուր գործածութեամբ մեր հպարտութեան ազդիրը դարձնող միջոցառումներով «քայլ» պահելով աշխարհի որեւէ զարգացած ժողովուրդի հետ: Այս կարելի կրնայ ըլլալ միմիայն խորացուած բարձրագոյն մակարդակի ուսումնասիրութիւններով, գրականագիտական խորացումած ուսումնասիրութիւններով, ինչ որ կարելի է զապահովել երկրորդականի արարտական դասարանի 16-17 պատանիներու լեզուի եւ գրականութեան չնչին պաշարով: Մեր լեզուաբաններն ու գրականագետները այ՛ն է, որ կ'երաշխարհան, իրենց բժախնդրի մօտեցումով լեզուն ու մշակոյթը կը մաքրեն, եւ առ տակաւ, կը սպասենք, որ գտնուին ու բիւրեղանան սովետախառն արտայայտչաձեւերը՝ հեռատեսիլէն, մամուլէն, թղթակցիւնի հայերէնէն, այնպէս՝ ինչպէս յաջողեցան ընել Վրաստանի մէջ:..

Լեզուն պահելու մեր մաքառումը նոր չէ. Ցեղասպանութենէն առաջ մեր արեւմտահայ գաւառներուն մէջ, եւ անկէ ետք սփիւռքի տարածքին՝ մինչեւ այսօր: Շատ դիւրին է ձեզի համար, պարո՛ն Յարութիւնեան, բեմերէն քարոզել մեզի հայ ազգի «ինքնուրոյն տեսական» մասին,Զալիֆօրնիսա թէ այլուր, երբ դուք, մեր երկրին մէջ, բազմած՝ ձեր նախարարի հանգիստ աթոռին, մէկ գրիչի հարուստծով ահա կը յաւկնկիջ ւաերել այն, ինչը թուրքը չյաջողեցաւ ընել արդէն 104 առաւել 600 տարիէ ի վեր:

Ա՛յս Է ձեր առած «անտաբեր ԲԱՅԼԸ», ձեր հրապուրիչ ՆԵՐԳԱՂՁի կանչն ու հրաւերը, ուղղուած՝ սփիւռքի երիտասարդ սերունդին, որուն համար Չայաստանի մէջ մասնագիտանալու գլխաւորագոյն պատճառը, մասնագիտութեան մը կողքին, հայերէնի եւ մեր պատմութեան տիրանալու ցանկութիւնն է, եւ վերջապէ՛ս, դառնալը՝ հայաստանաքնակ ու հայաստանակերտ, ու հայաստանա-ամէն ինչ, մասնակցիլ քայլ առ քայլ հայրենիքի կառուցման՝ հայերենով միայն: Մենք յոգնել ենք հայերէնը փնտռելէ մեր տուններէն դուրս ու արդէն նաեւ՝ տուններէն ներս: Սփիւռքահայ ուսանողները ստուար թիւ են այսօր համալսարաններուն մէջ: Չարցուցա՞ծ էք երբեւէ իրենց, թէ հայերէնը որեւէ ձեւով կը խոչնդրուե՞ իրենց ընտրած մասնագիտութեանց: Ուրեմն մենք՝ սփիւռքահայերս, չկա՞նք ձեր առած «քայլ»-երու ծրագրումներուն

մէջ... Ահաւասիկ թէ ի՞նչ արդիւնք կը սպասուի ձեր այս անհեթեթ որոշումէն. դուք ոչ միայն լեզուի, պատմութեան եւ գրականութեան պարտադիր կոչուած դասերն է որ ընտրովի կը դարձնեք, այլեւ՝ շա՛տ ւաեյի կարեւոր հետեւանքներու տանող բան մը. ընտրովի կը դարձնեք, մասնաւորաբար ՅԱՄԿՏԸԸ՝ հայերէնին հանդէպ, նոր սերունդին փոխանցուած համոզո՛ւմը, որ մեր լեզուն հայ ազգի փրկիչն է, եւ որ դուք ահա կը խողխողեք զայն... Կը զիջիք լեզո՛ւն, որ թուրքին հող ու հայրենիք տալու համագօր է...

Վստահ եմ՝ ձեզի անծանօթ պէտք չէ ըլլայ մաքառում բառը, ինչ կը վերաբերի մեր արժէքներէն, եւ այս՝ 1970-ականներուն սկսած: Շատ հաւանաբար միմիայն լսած ըլլալու էք այդ մասին, առանց ապրած ըլլալու եւ թերեւս՝ բանտարկուելու, Սիպիր դրկուելու մղձաւանքը՝ 1965-ին, Ցեղասպանութեան յիսնամեակի այդ լուսաւոր առաւօտուն եւ անոր յաջորդող օրերուն ու տարիներուն: Մաքառի՛ր հայրենի հողին ու լեզուին վերջնականապէ տիրանալու համար: Յիշե՛նք մայրենիին հանդէպ անդաւաճան անուններ՝ Սիվա Կապուտիկեան, Չօրի Բալայեան, Պարոյր Սեւակ, Գեորգ Էմին ու Յամօ Սահեան, Վարդգէս Պետրոսեան, առանց մոռնալու Ռաֆայել Իշխանեանը, որ ամէն վտանգ ու սպառնալիք աչքն առած՝ պայքարեցաւ առանց տեղի տալու խրատներուն եւ զգուշացումներուն ու ամբողջ բանակ մը՝ հեղինակաւոր ու վաստակաշատ գիտնականներ, թուաբանագետներ, հայեր, որոնց ազգային արժեւամակարգին շնորհիւ շահուածն է, որ մենք կը վայելենք այսօր...

Իսկ մենք, սփիւռքի տարածքին, կը վերցնէինք ու ցայսօր կը վերցնենք ւաեյի՛, շա՛տ ւաեյի ծանր բաժնիք այդ պայքարին: Դուք հայրենի հողին վրայ էք, ուր հայերէնը կ'ապրի, կը շնչէ ու կը ներշնչէ, իսկ մենք, գոկուած ըլլալով անկէ, մեր մայրենին Է, որ դարձուցած ենք հող ու հայրենիք՝ ստեղծելով մամուլ ու դպրոցներ, գործնք պահելն ու անոնց գոյատեւելը երաշխաւորելը այլ մղձաւանքներ կը ստեղծէ օր ու գիշեր...

Չաւատացինք ու դեռ կը հաւատանք, որ օր մը հայրենի մասնագետներն ու մանկավարժները օգնութեան պիտի հասնին հետզհետէ անգտանելի դարձած մանկավարժ ուսուցիչներու եւ գիտնականներու հայթայթման... Նախարարութեանը անտարբերութիւնը մեր պէտքերուն հանդէպ՝ ւաեյի բան աննախատեսելի էր... Չոն ոչինչ կայ մեզի համար, ու մենք կրկին առանձին ենք մեր կարողականութեանց հետ: Իսկ մեր կողմէ ձեզի տրամադրուած նիւթական հոսքին համար դուք մեզի շռայլեք կեղծիք միայն, առաւել եւս կեղծաւոր կը թուին նաեւ ձեր ամէն տեսակի հայապահպանական, հայրենասիրական ու ազգանուիրման մասին ձեր բարբաջանքները Չայաստանի, Նոյնպէ՛ս եւ հայ գաղութներու մէջ՝ ձեր այցելութեանց ընթացքին: Որովհետեւ այդ Չաւատքի աւագանին մէջ կնքուած մեր ե՛ւ Գրաւոր Լեզուն, ե՛ւ ուղղագրութիւնը գլխաւոր միջոցներն են, որ մեզ ՎԵՐԳՏՆԱԿԱՆԱՊԷՍ ձերբազատելու են«Չարիքի» առ տակաւ շարունակուող կայսրութեան ապազգայնացուցած մեր անցեալէն: Իսկ այդ ԼԵՃՈՒԻ իմացութիւնն ու իւրացումը կ'երաշխաւորուին միմիայն բուհերուն մէջ՝ շնորհիւ մեր սքանչելի գրականագետ-գրող-բանաստեղծ դաստիարակներուն:

Ինչպէ՛ս յուսադրուիլ, ինչպէ՛ս հաւատալ, որ մենք կրթութեան եւ գիտութիւններու նախարարութիւն ունինք, որուն միակ նպատակը իբր թէ «դիւրացնել» Է երկրին մասնագիտական, ձեր լեզուով՝ «թքնողւոճիական» մակարդակը, որուն արդիւնքով ի՞նչ ինչ ներդրումներ կ'ականջալէք ի շահ հայրենիքի՞ն...

Ի դէպ, հոս տեղին է յուշել, որ ֆրանսախօս Զեպեք Նահանգը իր թիւ 101 օրէնքով պարտադիր կը դարձնէ ֆրանսերէնի գործածութիւնը ամէնուրեք: Զանատայի պաշտօնական լեզուները հաւասար իրաւունքներով ֆրանսերէնն ու անգլերէնն են, բայց որովհետեւ Զեպեքը Նահանգ է եւ ֆրանսապիս փոքրամասնութիւն՝ Զանատայի մէջ, շրջապատուած ըլլալով ամէն վայրկեան իր լեզուին սպառնացող անգլերենով, մասնաւոր օրէնքներով պարտադիր կը դարձնէ անոր գործածութիւնը պաշտօնական թէ սովորական գործարքներու մէջ (աշխատանքի մը դիմող անձ մը պարտաւոր է Նախ ֆրանսերէն գիտնալ): Մոնրէալը ունի 2 ֆրանսախօս եւ 2 անգլիախօս համալսարաններ, որոնց գիտական մակարդակը միջազգային համբաւ կը վայելէ: Այս համալսարաններուն դասաւանդած բոլոր նիւթերը կը կատարուին ֆրանսերենով: Անգլերենով հրատարակուած մասնագիտութեան վերաբերող գիրքեր, յարբերաթերթերն ու ամսագիրները կը թարգմանուին ֆրանսերէնի: Ոչ ֆրանսախօս դասախօսները կը խօսին ֆրանսերէն թարգմանիչ գործիչներու օժանդակութեամբ: Ուրեմն, ֆրանսերէնը պարտադրելը նաեւ քաղաքական որոշում է, ինքնութիւնը պահելու եւ հիւսիսային այս անգլիախօս տարածքին մէջ չձուլուելու ռազմավարութիւն է: Չայաստանի թարգմանիչներու յարատեւ աշխատանքն հայթաթած կ'ըլլաք, իսկ Չայաստանի լեզուաբանական կաճառի՛ն՝ մեր ճկուն հայերէնը հարստացնելու աշխատանք, նորագոյն ճարտարարուեստի բառակազմութեան համար: Կը մնայ մէկ բան. հաւատա՛լ եւ համոզել բոլորը, որ մենք այսպէ՛ս երկիր կը կառուցենք:

Մենք քաջ գիտենք, որ նոր Չայաստանը, ինչպէս որ դուք կը սիրեք զայն կոչել, տակաւին պատրաստ չէ իր ուժերը սփիւռք պահելու: Մենք՝ սփիւռքահայերս, պատրաստ ենք նոյն անխախտելի հաւատքով, եղունգներով ու ականներով, եթէ պէտք է, պահպանել մեր ազգային ինքնութիւնն ու գոյութիւնը՝ ապաւինելով միմիայն մեր արդէն իրքեացուած ԱՐԵՄԱՍՏԱՅԱՅԵՐԵՆԻՍ, որուն դասական ուղղագրութիւնը ձեզ կը խանգարէ, կը շփոթեցնէ, իբր թե՛ դժուարահասանելի գիտութիւն, որուն ետին կը նախընտրեք անտեսել ամենակարեւորը, որ կրթական նախարարութիւնը պարտաւոր էր կատարել մեր անկախութեան առաջին իսկ օրէն, 1991-ին, Չայաստանը ազատ ու անկախ յայտարարելու օրն իսկ, որպէս Չայաստան-սփիւռք միացնող ուժ, որ կը շարունակեք յամառօրէն «որերորդ կարգի դասե՛ք», ձեր ուղղագրութեամբ մեզ մեկուսացնել, մեզ ձեզմէ հեռացնել, այսինքն՝ միանալ ա՛յն խարդախ ու աղուեւադրոշմ քաղաքականութեան, որուն միակ նպատակը հայութիւնը աղճատել իսկ էր, հայը կտրելէ եր իր միւս՝ սփիւռքի մէջ տարողնուածներու արմատներէն: Արեւելահայերէնը կը կաղայ ու Նահանքի մէջ Է արդէն, իսկ դուք այդ քաղաքականութեան առ տակաւ կիրարկողը դարձած էք... Պարո՛ն նախարար, ձեր խեղաթիւրուած տեսականքը կը խոչնդրուտ մեր ԲԱՅԼԵՐԸ:

Մեր խոշտանգումն ու ցիրուցան եղած ժողովուրդը ի մի բերող կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները հաւատացին մեր լեզուի ուժին եւ անկէ բխած կորովով կառուցեցին մեր 104 տարեկան սփիւռքը, որ այսօր թեւ ու թիկունք կը կանգնի այն հայրենի-

քին, որ վերջապէս ինքզինք կը յայտարարէ «ազատ ու անկախ»:

Եւ վերջապէս, պարո՛ն նախարար, ունեցանք երազուած ու միմիայն մեզի՛ պատկանող հարազա՛տ հող, վերջապէս՝ հայերէն՝ ամէնուրեք, հայախօս ոստիկան ու վարորդ, փռապան ու դերասան, փողոցը զուարթացնող, հայերէնով խաղացող մանուկներ, ամէն տեղ հայեր, հայալեզո՛ւ... Դուք գիտե՛ք ատոր արժէքը սփիւռքահայուն համար, դուք նշմարա՞ծ էք թաց աչքերը անոնց՝ ի տես այս իրական՝ ու շօշափելի հայրենիքին, որ երազ ըլլալէ դարձած է այլեւս, թէկուզե՛լ արդէն խարդախուած, այսօր՝ իսկ, դուրսէն թէ Ներսէն, եւ շատ հաւանականութեամբ դուք անտեղեակ՝ դուրսէն դէպի Ներս խուժող աղէտէն, որ այնպիսի փայլուն ծրարներով ձեզի կը ներկայանայ որպէս «երկրի փրկիչ», նորագոյն աղուեւսի քաղաքականութեամբ,ձեր ինքնասիրութիւնը միայն շոյող մետալներու ու ծափերու խժալուր աղմուկին մէջ լռութեան մատնելով իւրաքանչիւր իմաստուն քայլ՝ ի շահ Չայաստանի: Ձեր առած «քայլ»-երով մեր նորաբոյս երկրին հումքը կը խժռեք 70 տարի կորսուած համարելէ ետք այն արժանապատուութիւնը, որ այնքան դժուարաւ վերակերտուեցաւ մեր մեծ ու փոքր յարթանակներով: Յուսադրել ու հաւաստիացնել երիտասարդութիւնը, թէ հայերէնի բուհերէն վերացմամբ հարցերը կը լուծուին... Եւ թե՛ այդ Է ուղին դէպի արդիականութիւն եւ աշխարհին հետ քայլ պահելու միջո՞ց, ինչպիսի՞ր խաբկանքի մատնելով զանոնք:

Չոս սփիւռք Է, տեղական կառավարութիւնները ամէն վայրկեան կը փորձեն կրճատել մեր հայերէնի պահերը: Մենք ամէն օր կ'ապրինք խառն ամուսնութիւններու հետեանք՝ ոչ միայն ծուլման վտանգները, այլեւ՝ այլասերման վտանգները: «Արի տուն» սփիւռքը նախարարութեան ծրագրով Չայաստան այցելած մեր սակուտ կամ պատակի տղաքը մեծ խանդավառութեամբ կը յիշէ իրենց կեցողութիւնը, սակայն մեծ յուսախաբութեամբ կը խօսին Երեւանի ռուսերէնախառն եւ անգլերէնախառն հայերէնին մասին, կ'այապաղեն, որ ամէն տեղ հայերէն տառերով օտարալեզու ազդեր կան, ճաշարանները դարձնէ են ռեսթորան, հիւանդանոցը՝ հոսպիթալ, փուռը՝ պէքքըրի, շուկան՝ մարքեթ: Անոնք ցանկ կազմած են, որ խօսակցական լեզուին քանի՞ տոկոսը մաքուր հայերէն Է... Չարք կու տան. այս ամենը՝ վերջին 28 տարուան մէջ, այսքան արագընթաց հայերէնի Նահա՞նջ...

Իսկ դուք, պարո՛ն Յարութիւնեան, կարծես վերջին վրայ աղ ցանելու պէս, կրթութեան նախարարութիւնը, կարծես ամենագէտ, ամենակարող Աստուած ըլլար, կը յանգի ՄԵՃ ՈՒ ՄԵՐ ԻՆԶԵՆՈՒԹԻՒՆՎ ԿԵՐԱՑՆԵԼՈՒ քաղաքականութեան...

Չայերէնը Չայաստանի պաշտօնական լեզուն Է՛ ըսուեցաւ ու ամրագրուեցաւ, սակայն ոչ մեկ՝ «քայլ տեղեկ» մարմին, ոչ իսկ հին կամ նորագոյն վարչապետ ու Նախագահ, փորձեցին սփիւռքը հայրենիքէն վերջնականապէս հեռացնելու սովետական միտումնաւոր քաղաքականութիւնը սրբաբնէր: 1923-ին յայտարարուած եւ հլու հնազանդ կերպով գործադրուած տեքրետը (decree) չէրեւալ համարել ու դասական ուղղագրութիւնը որդեգրել՝ որպէս միասնութեան առհաւատչայ: Գիրքերու հեղինակները իրենեւ, եւ՛ կարգ մը հրատարակչատուներ, իրենք **«պիզիւնք»** սփիւռք հասցնելու հետամտութեամբ, սկսան դասական ուղղագրութեամբ հրատարակել կարգ մը գործեր, բայց ասոնք ձեզ՝ մեր «կրթութեան նախարարութիւնը» չէն հետաքրքրեր, որովհետեւ իրեն վստահուած պաշտօնը հայերէնը նախ իր պարտադիր վիճակելու դադրեցնել է՝ իբր թէ թող բուհերու պատասխանատու **տեքստ**ները որոշեն, թէ զայն պարտադրե՛ն, թե՛ ոչ»: Այո, որպէսզ մեր հպարտութեան ու սքանչացումին արժանի մեր հեղինակաւոր գրականագետները, լեզուաբաններն ու պատմաբանները փոխարինելու պատճառաբանութիւնը պատրաստ ըլլալ, որ առանց տալի-թմրակի, անձայն ու անշշուկ հեռացուին անոնք եւ փոխարինուին «ձեզի հետ քայլ առնող» անգոյն ու անգրագէտ, փողով ու փորով լիցքաւորուածներու փաղանգով:

Չայաստանը մեր հայրենիքն Է, թէկուզե՛լ ռուսախառն ու անգլերէնախառն հայերէնի գործածութեամբ, թէկուզե՛լ **«մոտենաացման** կիրքով գիտվցած», կարծես հայերէնը թանգարանի պատուական ըլլար, թէկուզե՛լ հետզհետէ բազմացող անտարբեր երիտասարդութեամբ, (քանիներ չէին գիտեր, թէ ո՛վ Է Մաշտոցը, Կոմիտասն ու Խորենացին, այս վերջի՞սս գիտէին. «Չա՛», փողոցի անուա ա, եղ ա...»): Ասո՛ր է, որ կը ձգտի հասնիլ այսօրուան կրթութեան նախարարութիւնը... Չաւատա՛լ ենթադրեալ «ճշմարտութիւն»-ներուն, թե՛ խստոտվանիլ, որ դուք չէք կրնար նման դաճանաութիւն ընել մեր այնքան դժուարութիւններէ ետք ճռք բերած պետականութիւնը դաշունահարել ներսէն: Պարզապէս տակաւին շատ էք միամիտ՝ կարենալ հաւատալու ձեր ուժերուն ու անուստաւալի ստեղծագործական կարողականութեան, ուղղել ներուժին, առանց Նաթախորներուն ու բնական հարստութիւններու նուաճել գիտնալ ու զարգացնել երկիրը, գիտակցօրէն եւ համոզումով,առանց տեղի տալու համաշխարհայնացման զանին...

ՉԱՐԳԱՆԱԼ՝ ԱՌԱՆՑ ՉԻՋՈՒՄԵՐՈՒ... այս Է Պաշխակցութեան գործելակերպի նշանաբանը, որ հիմաւած է 110 տարուան սփիւռքեան տաքն ու պաղը տեսած ու ապրած փորձառութեան վրայ:

ԳՈՀԱՆԱԼ ԵՒ ՅՈՒՍԱԼ

Վերջին տարիներուն զանգատող եւ յուսահատ մարդոց թիւը կ'աւելնայ: Ուրախ չեն իրենց վիճակէն, յուսահատ են եւ միշտ կը փափաքին, որ առաջնորդներ եւ պատասխանատու անձեր իրենց կենսքի պայմանները փոխեն:

Բոլորս ալ ծանօթ ենք Լիբանանի վերջին զարգացումներուն լոյսին տակ ստեղծուած իրավիճակին: Վերջապէս մենք ալ այս երկրին մաս կը կազմենք: Միշտ զանգատ ունինք. «Ո՛ր՛Ֆ, ո՛ր կ'ապրինք... Այս ի՛նչ կենսք է ... Չես կրնար ուզածիդ պէս շարժիլ»: Բայց կարելոր է յիշել, որ միշտ կան մեզմէ աւելի տկարները, որոնք նոյնիսկ իրենց անմիջական կարիքները չեն կրնար հոգայ:

Գոհացող անձեր ըլլալու համար նախ մենք մեր անձերը ընտելու ենք: Յաճախ մրցումի մէջ ենք մեր շուրջ գտնուող անհատներուն հետ: Կենսքի մէջ չենք կրնար ամեն բան ունենալ: Չենք կրնար մեր ուզած ձեւով ապրիլ: Կենսքը ունի իր ելեւէջները: Կենսքի պայմանները յաճախ մեզի չեն օգներ, բայց մենք պէտք ունինք գոյատեւելու եւ շնորհակալ ըլլալու մեր վիճակին մէջ:

Վերջին 20 օրերուն Լիբանանի կացութիւնը անկայուն է: Ամեն մարդ, հակառակ իր դժուար առօրեային, սկսած էր զաւակները դպրոց կամ համալսարան դրկել: Մարդիկ իրենց առօրեայ գործերուն կ'երթային: Սակայն յանկարծ լիբանանցին պոռթկաց դժուար այս պայմաններուն դէմ եւ ուզեց փոփոխութիւն:

Ընդհանրապէս շատեր կը սիրեն զանգատիլ եւ յուսահատիլ: Կարծես այդ ընելով՝ ուշադրութիւն կ'ուզեն գրաւել, որ իրենց ապրած երկիրը լաւ չէ: Կը կարծեն, թէ ուրիշ երկիրներու մէջ կենսքը աւելի «փայլուն» է: Այստեղ կ'արժէ յիշել մեր մեծ հայրերն ու մեծ մայրերը, որոնք 1915-ին գործուած Տեղասպանութեան պատճառով տեղահանուեցան թուրքին կողմէ, հեռացուեցան իրենց հայրենի երկիրէն եւ ապաստան գտան արաբական տարբեր երկիրներ: Հակառակ անոր որ տեղացի ժողովուրդին պայմաններն ալ մեր պայմաններէն շատ աւելի լաւը չէր, բայց եւ այնպէս ան սիրով ընդունեց մեր զաղթական եւ տառապեալ մամիկներն ու պապիկները: Նոյնիսկ այս օտար երկիրներուն մէջ ունեցանք այդ երկրին քաղաքացիութիւնը, հաւասարութիւնը տեղացի ժողովուրդին հետ: Ունեցանք մեր երեսփոխանները, նախարարները, պետական պաշտօնները: Ունեցանք ազատութիւն՝ կառուցելու հայկական սեփական դպրոցներ, ակումբներ եւ ազատօրէն սորվեցնելու Մեսրոպ Մաշտոցի գտած տառերը: Կրցանք սորվեցնել եւ շարունակել սորվեցնել Աստուածաշունչն ու հայոց պատմութիւնը:

Այսօր, երբ արաբական տարբեր երկիրներ իրենց ներդրութիւնները եւ դժուարութիւնները ունին, մեր լաւագոյնը ընենք չգանգատելու եւ յուսահատելու՝ գիտնալով, որ երբ մենք ալ մեր օգնութեան ձեռքը կ'երկնցնենք մեր տեղացի բարեկամներուն, այդ ձեւով մենք մեր երախտագիտութիւնը յայտնած կ'ըլլանք գրկաբաց մեզ ընդունած երկրին ու ժողովուրդին:

Ժամանակն է արթննալու եւ մեր լաւագոյնը ընելու, յոյսով լեցուելու եւ յոյս ներշնչելու բոլոր անոնց, որոնք անյոյս կ'ապրին:

Մեր գոհմանալով եւ յոյսով ցոյց տանք բոլորին, որ կրնանք փոխել, փոխուիլ եւ ունենալ լաւ երկիր մը՝ ըլլալ այդ Լիբանան կամ Հայաստան:

ՍԵՐԱՆ Ծ. ԱՐԵՆԵԱՆ

«ԱՊՐԱՐԺ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐՅԱՆՈՒՄ ԴԱՒԱԴԻՐՆԵՐ ՓՆՏՈՒԵԼԸ ՕՏԱՐԱԾԻՆ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ Է

Արցախում քաղաքական եւ զաղափարական բոլոր հնարաւոր միջոցները պէտք է ուղղուեն ազգային պետական համակարգ ձեւաւորելու շուրջ: Համոզուած ենք՝ այս հաստատման շուրջ առնուազն Արցախում գոյութիւն ունի համակարծութիւն: Դա վիճարկելի չէ եւ չի կարող լինել, քանի որ սա լինելիութեան գրաւական է: Լինելիութեան այս գրաւականը իւրաքանչիւր արցախցի նախ եւ առաջ զգացել է իր մաշկի վրայ, արեան գնով: Պետութեան ազգային բաղադրիչը միաւորող գործօն է, իսկ միաւորումը անհրաժեշտ է մի երկրի համար, որի պատերազմի առաջին գիծն ու թիկունքը համատեղուած են: Այսպիսով, անվտանգութեան տեսանկիւնից ազգային զաղափարախօսութիւնն առաջնային է: Առ այդ, ազգային հարցերի շուրջ պետական հայեցակարգի ձեւաւորումն ու հանրայնացումը, այլ խօսքով՝ հանրութեան ուղղորդումը դէպի միասնական ազգային զաղափարական հասկացութիւնների դաշտ կարելոյազոյն առաքելութիւն է, պետութեան անվտանգութեան ապահովման հիմնասկներէից մէկը:

Հայաստանի Հանրապետութիւնում 2018 թուականին տեղի ունեցած իշխանափոխութիւնը առիթ եղաւ շատ բաներ հարցականի տակ դնելու, նոր մօտեցումներ կիրառելու, նախկինը փնտելելու, լաւն ու վատը մի արշիւնով չափելու եւ, ի վերջոյ, արժեքները վերափոխելու եւ նոր արժեք համակարգ ներդնելու համար: Այս երեւոյթը ինչ-որ տեղ հասկանալի էր. վերջապէս նոր իշխանութիւնը կարիք ուներ ինքնահաստատուելու: Ինքնահաստատման այս գործելաոճին զուգահեռ, դժբախտաբար, կիրառուեց այնպիսի գործելաոճ, որի պատճառով Հայաստանում առաջացրեց «սենտրի» եւ «սպիտակների» պառակտիչ մթնոլորտ, որը անընդունելի է: Սա երեւոյթի մի կողմն է միայն. իսկ մի կողմից՝ երբ այս ինքնահաստատման ի խնդիր արժեհամակարգի փոփոխութիւնները միտում ունեն խաթարելու ազգայինը, միասնական հոգեւոր համակարգը, դա եւս անընդունելի է եւ դրա դէմ պայքարը՝ անհրաժեշտ: Թող բոլորը վստահ լինեն՝ ՀՀ Դաշնակցութիւնը այս պայքարի առաջին դիրքերում է: Այդպէս է եղել անցեալում եւ այդպէս է լինելու ապագայում:

Վերադառնաք Արցախ. վերջսօր վտանգ է զգացում Հայաստանի քաղաքական եւ հասարակական դաշտում տիրող «սենտրի» եւ «սպիտակների» պառակտիչ մթնոլորտի տիրապիտումը Արցախ: Փորձում է դաւադիրներ փնտռել Արցախում: Սա մեր երկրի համար արդեն անվա-

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱՒԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր բազմակողմանի ծառայութիւններուն մէջ մասնաւորաբար մշակութային մարզը յատուկ ուշադրութեան առարկայ դարձուցած է: Արդարեւ, կաթողիկոսարանի ընդհանուր կառուցին մէջ զուտ մշակութային արժէք ներկայացնող բաժանմունքներն են՝ մատենադարանը (հնատիպ եւ արդի գիրքեր), «Կիլիկիա» թանգարանը, ձեռագիրները, արխիւները, «Հասկ» ամսագիր պաշտօնաթերթը, «Հասկ Հայագիտական»-ը, տպարանը եւ հրատարակչական ծրագիրները:

Մշակութային ոլորտէն ներս կաթողիկոսութիւնը թէ՛ թեմերու մակարդակին վրայ է թէ՛ Հայաստանի Հանրապետութեան մշակութային կառուցներուն հետ սերտ գործակցութեան իւրայատուկ առաքելութիւն կ'իրականացնէ ի նպաստ հայ ժողովուրդի մշակութային զարգացման:

Այս մարզէն ներս ուրբաթ 8 եւ շաբաթ 9 նոյեմբեր 2019-ին, Հայաստանի Հանրապետութեան Տեղապահութեան թանգարանին մէջ տեղի ունեցած «Հայերու փրկութեան գործը Մերձաւոր Արեւելքի մէջ. 1915-1923 թթ.» գիտաժողովին յանուն կաթողիկոսութեան իր մասնակցութիւնը բերաւ մատենադարի եւ հնատիպերու տնօրէն Շահան Կար. Սարգիսեան, ուր զեկոյց ներկայացուց «Որբանոցէ կաթողիկոսարան. Կիլիկիոյ կաթողիկոսութեան հաստատումը Անթիլիասի մէջ» վերնագրով: Սրբազան հայրը պաշտօնական հանդիպում ունեցաւ Մ. Մաշտոցի անուն մատենադարանի տնօրէնութեան հետ: Ուրբաթ, 8 նոյեմբեր 2019-ի կէսօրին տեղի ունեցաւ «Փոխըմբռնման յուշագիր»-ի պաշտօնական ստորագրութիւն՝ առաւել սերտացնելու համար արդէն իսկ գոյութիւն ունեցող գործակցութիւնը եւ նոր մղում տալու մասնաւորաբար հայ ձեռագիրներու, մատենագրական աշխատասիրութիւններու եւ նմանազանի նիւթերու հետազոտութեան: Սրբազան հայրը նաեւ այցելութիւններ տուաւ Տեղասպանութեան թանգարան, Ազգային արխիւ եւ Կոմիտասի անուն թանգարան՝ գործակցութեան կարելիութիւններ ու ծրագիրներ պատրաստելու առաջադրութեամբ:

Ի ՎԵՐԱՋՈՅ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ՞ ՄԱՐԴՈՒ ԵՒ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Կը թուի, թէ աշխարհի իրաւարարութեան իրենք զիրենք կոչածներ, որոնք կը խօսին նաեւ մարդու իրաւունքներու մասին, պիտի հասկնան, որ համայն մարդկութեան կը սպառնան նոր վտանգներ: Հիվէական ռումբերու վտանգը հեռու է պարզ այն պատճառով, որ նախորդ դարու մրցակից պետութիւնները այսօր հաւասարապէս օժտուած են աւերիչ նոյն ուժերով եւ զիրար կը հաւասարակշռեն:

Բայց կարգ մը ժողովուրդներու եւ անոնց ղեկավարներու նուաճողական եւ ծաւալապաշտական մտածողութիւնները կը շարունակուին, մասնաւոր երբ յստակ վերաբերումի եւ ընդդիմութեան չեն արժանանար: Բիչ մը պէտք է օգտուիլ պատմութեան դասէն: Օսմանեան կայսրութեան ղեկավարները շատ լաւ գիտէին, որ իրենք կը գտնուէին աշխարհներու մէջ, ուր ոչ անցեալ ունէին, ուր ոչ մէկ մշակոյթ ստեղծած էին՝ պարզապէս քրտինք չունէին: Իրաւունք ստեղծած էին՝ զենքով եւ մահ սփռելով, կոշիւով եւ ներխուժումով: Այս բռնութեամբ ձեռք բերուած տիրակալութեան թրջական տրամաբանութիւնը միշտ եղած է նոր գրաւումներով ինքնահաստատում ունենալու ճիգ: Օսմանցիները իրենց կայսրութիւնը տարածած էին մինչեւ Եւրոպա եւ գրաւած՝ անոր մէկ մասը: Այդ գրաւումներուն հետքերը այսօր ալ Եւրոպայի մէջ կը շարունակուին եւ պատճառ են ազգամիջեան բախումներու, ինչպէս որ է պարագան Պալեստինայի երկիրներու: Օսմանեան կայսրութեան քաղաքական միտքը տարածման մէջ էր:

Օսմանեան կայսրութեան եւրոպական ցամաքամասի վրայ յառաջխաղացքը կանգ առած էր 1863-ին, Վիեննայի պատերու տակ, երբ օսմանեան բանակը չէր յաջողած գրաւել քաղաքը եւ՝ Նահանջած:

Օսմանեան կայսրութիւնը՝ որպէս քաղաքական կառույց, գոյութիւն չունի Ա. Աշխարհամարտի աւարտէն ի վեր, երբ ան կորսնցուց իր կողմէ գրաւուած բազմաթիւ երկիրներ: Անիրաւուած մնացին՝ հայերը, յոյները, արաբները եւ քիւրտերը: Այսինքն կործանուեցաւ Օսմանեան կայսրութիւնը, բայց վերջ պէտք ո՛ւնէ որպէս տարածութիւն եւ ոչ որպէս քաղաքական-ռազմավարական մտածողութիւն, պատերազմի աւարտին ի յայտ եկած յաղթական երկիրներու անհետեւ եւ այսօր ալ այդպէս շարունակուող քաղաքականութեան պատճառով: Եթէ այս քաղաքական ծրագիրը պարզօրէն կը տեսնենք եւ կը հասկնանք այսօր, անկարելի է ենթադրել, որ մեծ տերութիւնները, ինչպէս կ'ըսուէր, Անգլիան, Ֆրանսան, Իտալիան, Գերմանիան, Ռուսիան, Ամերիկան եւ ուրիշներ չէին տեսներ եւ չէն տեսներ այսօր:

Եթէ լսած ըլլային Ամերիկայի դեսպան Հալքի Մորկընթաւի խօսքը, որ Թուրքիան քաղաքական աւագակ մըն է, միջազգային քաղաքական կացութիւնը այսօր տարբեր կ'ըլլար, պատերազմներ եւ աւերներ կը կանխուէին:Թուրքիան կը շարունակէ իր ընթացքը եւ զարմանալի կերպով իր ունկնանի մէջ կը ցանցուին մեծ եւ հզօր երկիրները՝ Ամերիկան եւ Ռուսիան, Իսրայէլն եւ Գերմանիան, Անգլիան եւ արաբները:

Մեծ կոչուած երկիրները կ'առաջնորդուին իշխանական եւ պետական ետակրերուն շահերով: Ո՛վ չի գիտեր, որ Թուրքիան է իր նախագահը օժանդակած են Իսլամական Պետութիւն կոչուած ահաբեկչական շարժման, օգտուած են, անոր նախընթացած են ծախած են: Իր աղմկալի յայտարարութիւններէն ետք, Միացեալ Նահանգներու կառավարութիւնը, Թուրքիոյ մերձեցումը Ռուսիոյ հետ խոչընդոտելու համար, ընդունած է այցելութիւնը Թուրքիոյ նախագահին, որ իր ուզած ձեւով մեկնաբանած է քաղաքական կացութիւնը՝ միջամտելով նոյնիսկ Ամերիկայի Ներկայացուցիչներու տան (Քոնկրէս) որոշումներուն, ինչպէս՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցին, եւ յեղեղած է արդէն դասական դարձած իր մեկնաբանութիւնը:

Այս արդէն Թուրքիոյ քաղաքական դասական խաղն է:

Բայց վերջին մեծ նորութիւնը այն է, որ Թուրքիոյ նախագահը հայերը համարած է բոչուոր: Ոչ ոք տարրական պարկէշտութիւնը եւ քաղութիւնը չէ ունեցած ըսելու, որ աշխարհի այդ տարածքին թուրքը ինք եղած է բոչուոր, օտար, եկուոր, հոն ոչ մէկ արմատ ունեցած է, բռնութեամբ տիրացած է քաղաքակրթութիւն եւ մշակոյթ ստեղծած ժողովուրդներու հողին եւ ինչքին: Ե՛րբ կառուցած է Սուրբ Սոֆիա տաճարը, ե՛րբ կառուցուած է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, ո՛րը էին թուրքերը, ո՛րը էին թուրքերը, երբ անոնք կառուցուած են:

Այս եկեղծիքը եւ կարծրացումը ներկայիս աւելի կը շեշտուին կոնսպապշտ եւ ազգայնական մենատեր դարձած Թուրքիոյ ամբողջ իշխանութիւնը իւրացուցած նախագահին վրածած քաղաքականութեան պատճառով: Ժողովրդավար եր-

կիրները կը տեսնեն, եւ բնական հետեւութեամբ պէտք է գիտնան, որ բանտերը լեցուցած Ռեճեփ Թայիփ Էրտողան անընդունելի անձնաւորութիւն է: Բայց քաղաքական-պետական շահերը միշտ ալ ծալած եւ նստած են սկզբունքներու վրայ, որուն վերջին պատկերազարդ պատմութիւնը անոր նախագահ Տոնալտ Թրամփի հետ տեսակցութիւնն է եւ՝ յերկրածոյ արտայայտութիւնները:

Բայց ինչ որ ալ պատահի եւ ըսուի, Ռեճեփ Էրտողանի վերաբերումները, ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը անհամատեղելի են Եւրոմիութեան սկզբունքներուն հետ:

Եւրոմիութիւնն ալ, օր մը, այլազան անմիջական շահերու տուրք տալով, կրնայ շրջանցել սկզբունքները:

Թեւ քաղաքական դէմքեր կան, կան պարկէշտ քաղաքագէտներ, վերլուծաբաններ եւ լրագրողներ, որոնք կը մտածեն, երբեմն ալ կ'արտայայտուին, որ միջպետական դիմակահանդէսին վերջ պէտք է տալ, ոչ թէ՛ անոր համար միայն, որ պարկէշտ եւ ազնիւ են, այլ անոր համար, որ Ռեճեփ Էրտողան, անձնատուր՝ օսմանեան ծաւալապաշտական երագին, այլեւս վտանգ է ազատ երկիրներու, ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքին:

Այսօր, աւելի քան երբեք, Թուրքիոյ կողմէ անիրաւութեան ժողովուրդները, իսկական միացեալ ճակատ կազմելով, պէտք է ընդդիմանան նոր-կայսերական երազներով առաջնորդուող Թուրքիոյ եւ անոր մենատիրութիւն հաստատած նախագահին:

Բիչ կը խօսուի Ռեճեփ Էրտողանի Թուրքիայէն դուրս, կոթնելով եւրոպական երկիրներու մէջ հաստատուած թրջական համայնքներուն վրայ, քաղաքական ուժ ստեղծելու նկրտումներու մասին: Օրինակ, երբ ան կը թելադրէ Գերմանիոյ թուրքերուն, որ շատ զաւակ ունենան, որպէսզի ժողովրդավարական կարգով ազդեն երկրի քաղաքականութեան վրայ: Նման կացութիւն ստեղծելու միտումով բացակայ պէտք չէ ըլլալ նաեւ ինչ կը վերաբերի Հոլանտայի եւ Ֆրանսայի: Պատեհապաշտութեամբ, Ռեճեփ Էրտողան կոյնական նոյնութեան ազդակով կրնայ շահագործել նաեւ օսմանեան գրաւման տակ ապրած արաբները:

Հայկական ներազգային լուսաբանումը, այս հարցերով, օգտակար է, անկասկած: Բայց այդ լուսաբանումը նաեւ հայութիւնը ինք պիտի տանի միջազգային իրապարակ, ինչպէս ըսի՝ կազմելով միացեալ ճակատ:

Ի հարկէ, կարենալ ճակատ յարդարելու համար համայնքային, տեղական եւ սիրողական միջոցները անբաւարար են թրջական միջոցներուն եւ կարելիութիւններուն դիմաց:

Աւելի մեծ տեսնելու եւ աւելի մեծ մասնագիտական կազմակերպութիւն ստեղծելու հարցի դիմաց կանգնած ենք:

Հայկական եւ հայերէն թերթի մէջ գրուածէն անդին՝ իսկական ազդեցութեան ուժը օտարալեզու մեծ թերթերն են, զանգուածային մեծ լրատուամիջոցները: Ոչ՝ օտարալեզու ներհայկական սպառման ծառայող հրատարակութիւնները եւ լրատուամիջոցները:

Ինչպէ՞ս այդ ընել: Պարզ՝ կազմակերպութեամբ, որ չլլալ մասնակի եւ տեղական: Հանդիսութիւն եւ նոյնիսկ ցոյց կազմակերպելու տեղղէն վեր բարձրանալով:

Պէտք է գիտնալ նաեւ, որ բոլոր թուրքերը Ռեճեփ Էրտողան, Թալէթա, Էնվեր եւ Պեհաետտին Շաքիր չեն եւ ըստ այնմ գործել:

Գիրք մը ապապրած էի եւ ստացալ այսօր, երբ կը կարծէի աւարտած ըլլալ այս յօդուածը: Գիրքին անունն է՝ La Turquie, L'heure de vérité, 320 էջ, հրատարակութիւն՝ Editions Empreinte, temps présent, հեղինակ՝ Ariane Bonzon, ֆրանսական կարելու քաղաքական հրատարակութիւն Le Monde Diplomatique ամսագրի անձկազմի անդամ:

Գիրքը ընթերցումէն ետք ի հարկէ պիտի անդրադառնամ: Բայց գիրքին սկիզբը մէջերուած Հաննա Արենտի մտածումը օգտակար կ'ըլլալ նաեւ մեզի, Հայաստան եւ փոխընդեր, երբ քաղաքականութիւն կը խաղանք, կամ կ'ուզենք անոր պարկութիւնը:

Չլլալ: «Երբ ամեն ոք տեւաբար ձեզի տուտ կը խօսի, արդիւնքը այն չէ միայն, որ դուք կը հաւատաք այդ տուտներուն, այլ այն, որ ոչ ոք ոչ մէկ բանի կը հաւատայ: Ժողովուրդ մը, որ ալ չի կրնար որեւէ բանի հաւատալ, չի կրնար կարծիք ունենալ: Ան գրկուած կ'ըլլալ ոչ միայն իր գործելու կարողութենէն, այլ նաեւ՝ իր մտածելու եւ դատելու կարողութենէն: Եւ նման ժողովուրդով մը դուք կրնաք ընել այն, ինչ որ ուզեք»:

Այժմեական:

Յ. ՊԱՆԵԱՆ

16 նոյեմբեր 2019, Նուագիլ-Կրան

18 նոյեմբեր 2019

ՄԱՏԵՆԴԱՐԱՆ-ԳԱՆՁԱՍԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՁ
ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՐ
ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՄԱՐԱՀԻ ՄԸ



Մատենադարան-Գանձասար գիտական մշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցած է գրադարան-ընթերցասրահի բացման արարողութիւն:



Գրադարան-ընթերցասրահի բացման արարողութեան ներկայ գտնուած են՝ Արցախի նախագահ Բակո Սահակեանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսեանը, Արցախի կրթութեան, գիտութեան եւ մարմնակրթութեան նախարար Նարինէ Աղաբալեանը, Արցախի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբօսաշրջութեան նախարար Լեւոնի Յովհաննիսեանը, ինչպէս նաեւ՝ Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավար Եղկար Յարութիւնեանը:



Անոնք ծանօթացած են գրադարան-ընթերցասրահի կարելիութիւններուն եւ շէնքային պայմաններուն:

Շար.ը՝ էջ 8

ԳՈՐԻՍԸ ՆԿԱՏՈՒՅՑԱՒ ՏԱՐՈՒՄԸ
ԼԱՒԱԳՈՅՆ ՀԱՄԱՅՆԸԸ



«Լաւագոյն համայնք-2019» մրցումին քաղաքային համայնքներէն յաղթող նկատուեցաւ Գորիսը: Այս մասին գրուած է Հայաստանի համայնքներու միութեան «Դիմատետր»-ի էջին վրայ: «2019-ին Գորիսի մէջ կատարուած են լայնածաւալ շինարարական աշխատանքներ, քաղաքը կը շարունակէ մնալ գրաւիչ՝ ներդրողներու եւ զբօսաշրջիկներու համար: Հոն վերակառուցուած է զբօսաշրջութեան զարգացման համար Էական նշանակութիւն ունեցող Դիտակետ կոչուող տարածքը, Գորիսի կեդրոնական հրապարակը, հանձնեցակցի գիւղի խմելու ջուրի հարցը վերջնականապէս կը լուծուի: Բարեկարգման աշխատանքներ կը կատարին նաեւ համայնքի այլ բնակավայրերու մէջ: Այժմ համայնքը կ'աշխատի նաեւ բնակավայրերուն մակնիշներ տալու ուղղութեամբ:

«ԱՆԴՐԱՆԻԿ. ՄԱՐԴԸ ԵՒ ՌԱԶՄԻԿԸ»
ԵՒ «ԼԵՒՈՆ ՇԱՆԹ. ՄԱՐԴԸ ԵՒ ԳՈՐԾԸ»
ԳԻՐՔԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ

Համագային հայ կրթական մշակութային միութեան երեանի գրասենեակին կազմակերպութեամբ, «ԱրտԲրիջ» գրատուն-սրճարանին մէջ ներկայացուեցաւ Աւետիս Ահարոնեանի որդիին՝ Վարդգէս Ահարոնեանի երկու նոր հրատարակութիւնները՝ «Անդրանիկ. մարդը եւ ռազմիկը» եւ «Լեւոն Շանթ. մարդը եւ գործը» գիրքերը:

Շնորհահանդէսին ընթացքին խօսք առին նշանաւոր գրականագետներ, լեզուաբաններ, պատմաբաններ եւ այլ մտաւորականներ, որոնք արժեւորեցին Վարդգէս Ահարոնեանին հսկայ աշխատանքը՝ երկու մեծանուն հայերուն՝ Անդրանիկի եւ Շանթի կեանքի ցարդ հանրութեան քիչ յայտնի փաստերը: Համագայինի երեանի գրասենեակի ղեկավար Ռուզան Առաքելեան յայտնեց, որ այս գիրքը պզտիկ տուրք մըն է մեր հանճարեղ գրող Լեւոն Շանթի 150-ամեակին: Բոլոր այն յօդուածները, որոնք տպագրուած են սփիւռքի մէջ, առաջին անգամ ըլլալով Հայաստանի մէջ լոյս պիտի տեսնեն:

Անդրադառնալով «Անդրանիկ. մարդը եւ ռազմիկը» գիրքին՝ արծակագիր, ՀՅԴ անդամ Արտաշէս Շահբազեան նշեց, որ Համագայինը կը ծրագրէ տպել նաեւ երրորդ՝ «Րաֆֆի» գիրքը. «Հայ ժողովուրդին, Հայաստանի հայրութեան կը վերադարձուի կորած անուն մը, տաղանդաւոր, ազգային, ազնիւ պետական մեծ գործիչի անուն» Վարդգէս Ահարոնեան: Ահարոնեանը բաւական մտերիմ եղած է Անդրանիկին հետ, որուն մասին կարելի է վկայել այն, որ Անդրանիկը մտերիմ եղած է նաեւ անոր հօր՝ Աւետիս Ահարոնեանին հետ, եղած է Անդրանիկին գրագիրը, թարգմանիչը, գործավարը եւ բազմիցս գտնուած է անոնց տունը:

ՇՐՋԱՆԱԳՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԿԸ ԴՐՈՒԻ ԴՐՈՇՄԱԹՈՒՐԹ ՄԸ՝
ՀԱՅԱԿԱՎԱՆ ԱՌԱՋԻՆ ԴՐՈՇՄԱԹՈՒՐԹ
100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ

Հայկական առաջին դրոշմաթուղթին 100-ամեակին նուիրուած դրոշմաթուղթերու ցուցահանդէսի ծիրին մէջ «Հայփոստ» ընկերութիւնը շրջանառութեան մէջ դրած է «Հայոց պատմութիւն. Հայաստանի առաջին նամականիշի 100-ամեակ» նիւթով դրոշմաթուղթը: Յայտնեց, որ հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցած է Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարանին մէջ՝ իովանաւորութեամբ «Հայփոստ»-ի գլխաւոր գործադիր տնօրէն Հայկ Աւագեանի, Հայաստանի բարձր արհեստագիտութիւններու արդիւնաբերութեան փոխնախարար Արմէն Աբրոյեանի եւ Հայաստանի դրոշմաթուղթերու միութեան նախագահ Յովիկ Մուսայելեանի:

Մուսայելեան ըսած է, որ ցուցահանդէսին ներկայացուած են տարբեր նիւթերու վերաբերեալ հաւաքածոներ: «Ազգային դրոշմաթուղթերու միջոցով կարելի է ծանօթանալ ազգի ինքնութեան, պատմութեան եւ մշակոյթին: Բաւական է թերթել ամենամեայ ազգային դրոշմաթուղթերու հաւաքածոները եւ պատկերացում կազմել երկիրին մէջ տեղի ունեցած բոլոր կարեւոր իրադարձութիւններուն մասին», շեշտած է ան:

Մուսայելեանի խօսքով, դրոշմաթուղթը կը համարուի պետութեան խորհրդանիշ: Հայկական դրոշմաթուղթերու մէկդարեան պատմութեան ընթացքին անոնցմէ շատերը մրցանակներու եւ մետալներու արժանացած են միջազգային ցուցահանդէսներու մէջ՝ բարձր պահելով ազգային դրոշմաթուղթերու հեղինակութիւնը:

«Հայոց պատմութիւն. Հայաստանի առաջին նամականիշի 100-ամեակ» նիւթով դրոշմաթուղթին վրայ պատկերուած է ցարական Ռուսիոյ 1 կոպէկ անուանագինով նոյնատիպ դրոշմաթուղթը, որ 1919-ին Հայաստանի Ա. Հանրապետութեան համար ծառայած է իբրեւ առաջին դրոշմաթուղթ: Դրոշմաթուղթին վրայ կատարուած է «K. 60.



ԵԴՀ պատմութեան բաժանմունքի տնօրէն Էդիկ Միսասեան կարծիք յայտնեց, որ բոլորը պարտաւոր են զօրավար Անդրանիկի մասին հրատարակուած որեւէ աշխատանք ներկայացնելու հանրութեան՝ խօսելով զօրավարին թէ՛ մարդկային եւ թէ՛ ռազմական տաղանդին մասին: Ըստ անոր, գիրքը յուշագրութիւն չէ, այլ տեղեկութիւն է Անդրանիկի կեանքի տարբեր փուլերուն, անոր գործունեութեան, մարդկային տարբեր գիծերուն եւ միաժամանակ զօրավարական տաղանդին մասին:

Գրականագետ Սուրեն Դանիէլեան շնորհակալութիւն յայտնեց Համագայինի հայ կրթական մշակութային միութեան՝ նշելով, որ ասիկա այն կազմակերպութիւնն է, որ երբեք չէ կորսնցուցած իր հեղինակութիւնը, որ մեր մէջ պահած է ճշմարտութեան, հաւատքի, սիրոյ սերմը:

Շնորհահանդէսին ելոյթ ունեցան նաեւ բանասիրական գիտութիւններու դոկտոր Վաչագան Գրիգորեան, բանասիրական գիտութիւններու թեկնածու-դոցենտ Վարդան Պետրոսեան, բանասիրական գիտութիւններու թեկնածու-դոցենտ Սերժ Սրապիոնեան, Գրականութեան հիմնարկի տնօրէն Վարդան Դեղիկեան եւ բանաստեղծ Յասմիկ Սարգսեան:



«K» յաւելաւորը: Դրոշմաթուղթին վրայ կարելի է տեսնել նաեւ այդ տարիներուն նամակատան մէջ օգտագործուած կնիք, ինչպէս նաեւ՝ «Հայաստանի ԱՌԱՋԻՆ Նամականիշ» եւ «100-ամեակ» գրառումները՝ հայերէն եւ անգլերէն: 230 Հայաստանի Հանրապետութեան դրամ անուանական արժեքով դրոշմաթուղթը տպագրուած է Ֆրանսայի «Cartor» տպագրատան մէջ՝ 40 հազար տպաքանակով: Նշեց, որ դրոշմաթուղթի հեղինակն է «Հայփոստ»-ի ձեւաւորող Դավիթ Դովլաթեանը:

ՊԱՐԳԵՒՆԵՐ՝ ԶԻՆԱՐԵՆ ԴԱՍԱԴԱՆԴՈՂՆԵՐՈՒՆ
ԵՒ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ

Հայ-չինական բարեկամութեան դպրոցին մէջ 15 նոյեմբերին Հայաստանի մէջ Զինաստանի դեսպան Թիան Էրլոնկ պարգևներ եւ վկայականներ յանձնեց չինարէն դասաւանդողներուն եւ ուսումնասիրողներուն: Արարողութեան ներկայ էին Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարի տեղակալ Արեւիկ Անափիոսեանը, չինարէն դասաւանդողները եւ ուսանողները:

Դեսպան Էրլոնկ յոյս յայտնեց, որ մրցանակները պիտի նպաստեն չինարէն ուսումնասիրողներուն արդիւնաւետ աշխատանքին, որ իր հերթին պիտի նպաստէ հայ-չինական յարաբերութիւններու աւելի եւս զարգացման: Ըստ անոր, ներկայ դրութեամբ Հայաստանի մէջ չինարէն կը սորվի 2800 մարդ, եւ կան 30-է աւելի չին ուսուցիչ եւ կամուր:

Արեւիկ Անափիոսեանին համաձայն, չինարէնի ուսումնասիրութիւնը լաւագոյն ուղին է Զինաստանի լեզուամշակոյթը հասկնալու: Ան նշեց, որ Հայաստանի մէջ չինարէնի նկատմամբ մեծ հետաքրքրութիւն կայ, ինչ որ կարելի է հայ-չինական բարեկամական յարաբերութիւններուն համար:

ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍ՝ ՆՈՒԻՐՈՒՄԸ
ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ
ԸԱՌԵԱԿԻ ԶԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄԵԱԿԻՆ



Վերջերս «Արամ հաշատրեան» համերգասրահին մէջ տեղի ունեցաւ Կոմիտասի անուան ազգային քառեակի հիմնադրման 95-ամեակին նուիրուած յօբելեանական նուագահանդէս: Բացի քառեակին հիմնադրման յօբելեանէն՝ երեկոյին ընթացքին շեշտուեցաւ նաեւ Էդուարդ Թադեոսեանի՝ քառեակին կազմին մէջ գործունեութեան 50-ամեակը, ինչպէս նաեւ Ալեքսանդր Կոստեանի՝ քառեակին մէջ աշխատանքի 30-ամեակը:

Յօբելեանական նուագահանդէսին ընթացքին կատարուեցին հանդէս եկան հայ երաժշտարուեստի անուանի ներկայացուցիչներ՝ երգչուհի Իրինա Չաքեանը, «Խաչատրեան» թրիոն, դաշնակահար Արմէն Բաբախանեանը, երգիչ, երգահան Վահան Արծրունին՝ իր քառեակին հետ, «Հովեր» պետական սենեկային երգչախումբը: Նշեց, որ քառեակը հիասքանչ կերպով կատարած է Կոմիտասի ստեղծագործութիւնները:

Երեկոյի ընթացքին պատուաւոր վրայ ցուցադրուած է տեսաշար՝ քառեակին գործունեութեան պատմութեան՝ հիմնադիր կազմին, անոր միջազգային ճանաչում բերած կազմերուն, ինչպէս նաեւ վերջին տարիներու ձեռքբերումներուն մասին:

ԳԻՄՐԻԻ ԸԱՀԱՔԱԿԵՏԱՐԱՆԸ
Կ՝ԱԶԱԿՑԻ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ԵՒ
ՇԻՐԱԶԻ ԱՆՏԻՊ ԳԻՐԵՐՈՒ
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի Գրողներու միութեան 85-ամեակին նուիրուած տօնական տարուան շրջանակներուն մէջ կը շարունակուին ձեռնարկները միութեան մարզային բաժանմունքներուն մէջ: Մինչ մարզի գրողներուն եւ ընթերցողներուն հետ հանդիպումը՝ Հայաստանի Գրողներու միութեան նախագահ, բանաստեղծ Էդուարդ Միլիտոնեանը եւ գրողներու միութեան Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետեանը ընդունեց Գիմրիի քաղաքապետ Սամուէլ Բալասանեանը: Զաղաքապետը շեշտեց Գրողներու միութեան աշխատանքը, խօսեցաւ Անտիք Իսահակեանի երկերուն լիակատար ժողովածուին 6-րդ հատորին մասին, որուն շնորհահանդէսը տեղի ունեցած էր օրեր առաջ՝ Անտիք Իսահակեանի տուն-թանգարանին մէջ, եւ որուն տպագրութիւնը իրականացուած էր քաղաքապետարանին աջակցութեամբ:

«2020 թուականի պիտոճէին մէջ պիտի ներառենք Յովհաննէս Շիրազի «Հայոց տանութեան»-ի տպագրութիւնը, որովհետեւ ինծի տեղեկացուցած են, որ շատ հատաձեւեր պիտի մննչեւ այսօր անտիպ են: Պատրաստ եմք աջակցելու նաեւ Շիրազի այլ հատորի մը տպագրութեան, իսկ 2021-ին կրկին կ'անդրադառնանք Իսահակեանին», խոստացաւ Գիմրիի քաղաքապետը:

Համագործակցութեան համար Էդուարդ Միլիտոնեան շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետին, ապա խօսեցաւ Գիմրիի մշակութային եւ գրական կեանքին մասին: Էդուարդ Միլիտոնեան ընդգծեց, որ՝ «Գիմրին միշտ ալ եղած է արուեստի, գրականութեան, փիլիսոփաներու կեդրոն: Զաղաքի հոգեւոր զարգացումը կը տեսնենք շարունակութեան մէջ, եւ այստեղ իրենց դերը ունին գրողներն ու միութեան Գիմրիի բաժանմունքը, որ շատ լաւ գործ կատարած է: Շնորհակալ եմք նաեւ քաղաքապետարանին՝ անոնց գործունեութեան աջակցելուն համար», ըսած է Էդուարդ Միլիտոնեան:

Գիմրիի քաղաքապետը վստահեցուց, որ, ինչպէս անցնող տարիներուն, այսուհետեւ քաղաքապետարանը պիտի գտնուի Գրողներու միութեան կողքին: Հաղորդեց, որ Գիմրիի քաղաքապետը Էդուարդ Միլիտոնեանին յանձնեց շնորհակալագիր՝ մաղթելով ստեղծագործական կանաչ երթ եւ համագործակցութիւն:



Պատրաստեց՝ ՄԱՐԻՆԱ ՀԱՄԱՍԵԱՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ՀԱՅՐԻԿԻ ԵՒ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

- ՍԻՒՆԻՔ ԵՒ ԱՐՑԱԽ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրբ Էջմիածնի վանական կեանքէն ներս ռուսական կառավարութեան տեսական միջամտութիւնները եւ կաթողիկոսի հեղինակութիւնը հակակշիռի տակ պահելու եւ սիւնտը գերադաս նկատելու քայլերը ծանր կը ճնշէին Յայրիկի վրայ: Կառավարութիւնը նաեւ քանի անգամ փորձեց հակակշիռի տակ առնել Գեորգեան ճեմարանը:

Պոլոժնիայի կանոնադրութեան համաձայն, կաթողիկոսական շատ մը իրաւասութիւններ սիւնտին փոխանցուած էին: Սիւնտի պրոկուրորը Կանչելիւն էր, վրացի մը, քարտուղարը՝ Աւետիք Եզեկեան: Կառավարութիւնը կ'աշխատէր հայ եկեղեցւոյ ղեկավարման կարգը ռուս եկեղեցւոյ կառավարման համակարգին նման կաղապարել: Արդարեւ, Պետրոս Մեծի օրով, 1721-ին Մոսկուայի եւ համայն Ռուսաստանի պատրիարքութիւնը վերցուած էր եւ պատրիարքական իրաւասութիւնները փոխանցուած էին սրբագոյն սիւնտին. ռուս եկեղեցւոյ ղեկավարութիւնը կազմուած էր երեք մետրոպոլիտէ (Պետերբուրգի, Մոսկուայի եւ Քիեւի), տասնչորս արքեպիսկոպոսէ եւ յիսուն եպիսկոպոսէ (պատրիարքութիւնը վերականգնեցաւ 1917-ի յեղափոխութենէն ետք): Յայրիկ կարելի բոլոր միջոցներով կը պայքարէր կառավարութեան միջամտութիւններուն դէմ. կը դիմադրէին նաեւ Էջմիածնի միաբանները: Կանչելի կաթողիկոսին եւ միաբաններուն դիմադրութեան կ'աշխատէր հակապետական եւ յեղափոխական բնոյթ տալ: Անոր ձեռքին գործիք էր Աւետիք Եզեկեան:

Էջմիածնի միաբաններէն յիշեցը քանի մը դէմքեր: Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան, Սուրմալուի Խալֆալու գիւղէն, եղած էր Երևանի Սուրբ Կարապետ եւ Վաղարշապատի Սուրբ Գայիանէի վանքերու վանահայր եւ Տաթևի, Արցախի ու Վրաստանի առաջնորդ եւ ճեմարանի ուսուցիչն էր: Ան հետագօտած ու նկարագրած էր հայոց պատմութեան ու մշակոյթի յիշատակարաններ, եղած էր հայկական բանահիւսութեան նմուշներու առաջին հաւաքողներէն, ուսումնասիրած էր հայագիտութեան եւ լուսաւորական շարժման պատմութեան հարցեր եւ աշխատութիւններ ուներ հայ եկեղեցւոյ պատմութեան ու դասնաբանութեան վերաբերեալ:

Մերոպ վարդապետ Մովսիսեան, Չանգեզուրի Շիկահող գիւղէն, բանահիւսութեան մագիստրոս, գիտական աշխատութիւններու հե-



Յայրիկ իր սպիտակ ձիուն վրայ

ղինակ, Երեւանի եւ Շուշի թեմական դպրոցներու տեսուչ եղած էր եւ մասնակցած Չուարթնոցի պեղումներուն:

Գարեգին վարդապետ Յովսէփեան, Արցախի Զարդախլու (այժմ՝ Մաղաւուզ) գիւղէն, մանկավարժ եւ հայագետ, արուեստաբան եւ փիլիսոփայութեան դոկտոր, Գեորգեան ճեմարանի ուսուցիչ եւ մատենադարանապետն էր:

Կարապետ վարդապետ Տէր Մկրտչեան, Նախիջեանի Յոնա գիւղէն, աստուածաբան, պատմաբան եւ բանասէր, փիլիսոփայութեան դոկտոր, Գեորգեան ճեմարանի դասախօս էր, «Արարատ» ամսագիրի խմբագիր եւ ուսումնական վարչական յանձնաժողովի անդամ:

Կոմիտաս վարդապետ Սողոմոնեան, Քեօթահիայէն, երգահան, երգիչ, երաժշտասէր, բանահաւաք, խմբավար ու մանկավարժ, Գեորգեան ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ էր: Ան պատարագի մշակումը սկսաւ 1892-ին: Մայր տաճարին մէջ քառաձայն պատարագի երգեցողութիւնը ընդհանրացաւ:

Նահապետ վարդապետ Նահապետեան, Ախալցխայէն, Գեորգեան ճեմարանի ուսուցիչ, տեսուչ, ուսումնական յանձնաժողովի նախագահ, կաթողիկոսի դիւանատան կառավարիչ եւ գաւազանակիր եւ նաեւ տպարանական յանձնաժողովի նախագահն էր: Կովկասի փոխարքայ իշխան Կալիցինի հրամանով ան Վահան վարդապետ Տէր Գեորգեանի հետ Ռոստով քաղաքը տեղափոխուեցաւ:

Գալուստ Տէր Մկրտչեան, Ջաւախքի Ծուղորուք գիւղէն, հայագետ, պատմաբան, բնագրագետ, աղբիւրագետ եւ թարգմանիչ, դպիրի աստիճանով Էջմիածնի միաբան էր եւ «Արարատ» ամսագիրի խմբագիր: Անոր հայագիտական հետազոտութիւնները բազմաբնոյթ են՝ հայ հին մատենագիտութիւն, վիմագրութիւն, հնագրութիւն, ձեռագրագիտութիւն, միջնադարեան հայ առակագրութիւն, ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, վարքագրութիւն եւ վկայաբանութիւն, դրամագիտութիւն եւ աղանդաւորական շարժումներու արձագանքներ Եւրոպայի մէջ: Մեծ է անոր ներդրումը բնագրագիտութեան եւ աղբիւրագիտութեան մէջ:

Մայր տաճարին լուսարարն էր Դեռնոյ եպիսկոպոս:

Գեորգեան ճեմարանը, վանքին արեւելեան կողմը, կարմիր ներկուած սրբատաշ քարերով, երկարականի շէնք էր. ուներ մատենադարան, աշակերտներու կացարաններ, խոհանոց, փուռ, ճաշարան եւ լուացքի տուն:

Ըստ Պոլոժնիայի, ճեմարանը հոգեւոր վարժարան էր, որուն նպատակը հոգեւորականներ պատրաստելն էր:

Ճեմարանը ուներ շուրջ երկու հարիւր աշակերտ: Կ'ընդունուէին



Գեորգեան ճեմարան

հայկական ծխական դպրոցի չորրորդ դասարանը աւարտած ուշիմ եւ շնորհագարող տղաք՝ բոլոր գաւառներէն:

Ճեմարանը կու տար բազմակողմանի ընդհանուր կրթութիւն: Կը դասաւանդուէին հայերէն լեզու՝ աշխարհաբար եւ գրաբար, հայոց պատմութիւն, հայ մատենագրութիւն, մատենագիտութիւն, գրականութիւն, աշխարհագրութիւն, ընդհանուր պատմութիւն, թուաբանութիւն, փիլիսոփայութեան պատմութիւն, բնագիտութիւն, տիեզերագիտութիւն, հոգեբանութիւն, տրամաբանութիւն, Սուրբ Գիրք, եկեղեցական երաժշտութիւն, հայ եկեղեցական իրաւունք, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ընկերաբանութիւն եւ քաղաքատնտեսութիւն:

Ճեմարանը ուներ բազմակողմանի զարգացման տէր նուիրեալ եւ որակեալ դասախօսներ՝ Գարեգին վարդապետ Յովսէփեան, Կարապետ վարդապետ Տէր Մկրտչեան, Կոմիտաս վարդապետ, Յունակ



Կոմիտաս վարդապետ

վարդապետ Չօրաբեան, Սեդրակ Մաղիսեան, Ստեփանոս Պալասանեան, Կարապետ Կոստանեան, Մանուկ Աբեղեան, Միկաս Բերբերեան, Զրաչեայ Աճառեան, Յակոբ Մանանդեան, Սիրական Տիգրանեան, Յովհաննէս Յովհաննիսեան, Լեօ, Երուանդ Տէր Միկասեան, Ստեփանոս Կանայեան եւ Մկրտիչ Նալեան: Վերակացուներն էին Յովսէփ Գրիգորեան եւ Գեորգ Ղազարեան:

Աշակերտները կ'արթննային առտուան ժամը 6:00-ին եւ կը լուացուէին: Ժամը 7:00-ին՝ սերտողութիւն, ապա՝ նախաճաշ: Դասաւանդութիւնները կը սկսէին ժամը 8:00-ին: Ժամը 12:00-ին՝ կէսօրան ճաշ, ապա՝ ժամ մը հանգիստ, որմէ ետք Նորէն դաս մինչեւ ժամը 5:00: Այնուհետեւ երկու ժամ՝ սերտողութիւն: Ժամը 7:00-ին՝ ընթրիք: Առտու եւ երեկոյ, դէպի արեւելք դառնալով՝ աղօթք: Ճեմարանը ուներ իր տարազը:

Յաճախակի առիթներով աշակերտական պտոյտներ կը կազմակերպուէին:

Շրջանաւարտները աւարտական շարադրանք կը ներկայացնէին, որ կը պաշտպանէին քննչական յանձնաժողովին առջեւ: Այնուհետեւ անոնք կամ կը ձեռնադրուէին, կամ ալ ուսումը կը շարունակէին ռուսական եւ եւրոպական համալսարաններու մէջ:

Դոգետր կոչումը լաւագոյն միջոցը կը նկատուէր ազգին ծառայելու:

Դայ ուսուցիչներուն ալ կոչեր եղան քահանայանալու եւ ժողովորդին մէջ գիւղերը երթալու, փակուած դպրոցները ըստ կարելոյն փոխարինելու համար: Շատեր անապին յայր կոչին:

Ճեմարանի մէջ կը մշակուէին հայկական դպրոցներու կրթական ծրագիրները, կը կազմուէին դասագիրքեր ու ձեռնարկներ: Ճեմարանը կը պահուէր Էջմիածնի վանքի եկամուտներու, հանգանակութիւններու, նուիրատուութիւններու ու կտակներու միջոցով:

Ճեմարանի վերատեսուչը կաթողիկոսն էր, որ գործերը կը վարէր ուսումնական խորհուրդին եւ տեսուչին միջոցով:

Ճեմարանի պահակը Նախօ Զեռնի էր, Սոկաց գաւառի Գինեկանց գիւղէն: Գինեկանց (Սուրբ Գայիանէ-Գիւն), Մոկսէն արեւմուտք, Բառ հովիտի լանջին, Սուրբ Նշան եւ Սուրբ Գեորգ եկեղեցիներով եւ Գինեկանց Սուրբ Աստուածածին վանքով, պատմական գիւղ էր: Կարիքն ու զրկանքը ստիպած էին Նախօ Զեռնի հրաժեշտ տալու հարազատներուն, դուստրերուն՝ Ամաստի, Սիւնի եւ Դեթարի եւ չքնաղ ծննդավայրին եւ հասնելու Էջմիածն:

Բացառիկ յիշողութեան տէր, աւանդապահ ու ստուգապատում

ասացող, Նախօ Զեռնի «Դաւիթ եւ Միւր» պատումը գրի առաւ Մանուկ Աբեղեան: Իր հարուստ իմացութեամբ, պարզութեամբ ու պարտաճանաչութեամբ Նախօ Զեռնի սիրուած էր թէ՛ միաբաններէն, թէ՛ աշակերտներէն եւ թէ դասախօսներէն:

Խրիմեան Յայրիկ 26 յուլիս 1898-ին, Գարեգին եւ Կորին Վարդապետներուն ու երկու շաթիրներու ընկերակցութեամբ, իր սպիտակ ձին հեծնելով ուղեւորութեան ելաւ դէպի Սիւնիք եւ Արցախ:

Յայրիկ ու իր ուղեկիցները անցան Օշականէն, Աշտարակէն, Մուղնիէն, հասան Բջնի, եւ Շաղկունեաց լեռները կտրելով յուլիս 30-ին հասան Սեւանի վանք:

Սեւանի վանքէն անոնք ճամբան շարունակեցին դէպի Նոր Բայազիդ (այժմ՝ Գաւառ), Դարպազեազ (Վայոց ձոր) եւ Սուրբ Խաչ վանքէն, լեռնային դժուարանցանելի ճամբաներով բարձրացան Սիւնեաց լեռները:

Ամէն տեղ հայ գիւղացիներ խանդավառ ընդունելութիւն ցոյց տուին Յայրիկի եւ ձիով կամ հետիոտն ուղեկցեցան գիւղէ գիւղ:

Յայրիկ եւ իր ուղեկիցները օգոստոս 12-ին հասան Տաթև: Վանքին զանգակները երկար կը թղանջէին: Ժողովուրդը սրտայոյզ աղաղակներով դիմաւորեց հայոց հայրապետին մուտն ի տաճար:

Օգոստոս 13-ին Յայրիկ Տաթևէն ճամբայ ելաւ դէպի Գորիս: Յալիճորի, Շինուհայրի, Խոտի եւ Զարահունջի գիւղացիները աղ ու հացով դիմաւորեցին կաթողիկոսը:

Յայրիկ շուրջ 200 ձիաւորներու ուղեկցութեամբ ճամբան շարունակելով հասաւ Գորիս, ուր ժողովրդային ընդունելութեան արժանացաւ: Գաւառապետ, քաղաքապետ, պետական պաշտօնէութիւն եւ երեսելիներ կամարի տակ աղ ու հացով դիմաւորեցին զինք: Խալամներու կոթնապետը բարի գալուստի խօսք արտասանեց:

Յայրիկ եւ իր ընկերակիցները Մանուչար բէկ Մելիք Յիսէյիսեանցի տան հիւրերը եղան:

Օգոստոս 14-ի առաւօտուն Յայրիկ Գորիսէն շուշեցիներու ուղարկած կառքով ճամբայ ելաւ դէպի Շուշի, ուր հասաւ յաջորդ առաւօտ: Դազակնեցոց եկեղեցւոյ հրապարակին վրայ շքեղ կամար մը կապուած էր: Տասնեակ հազարաւոր հայեր եւ թուրքեր ծափերով ու կեցքներով ողջունեցին Յայրիկի մուտը Շուշի:

Եկեղեցւոյ մէջ կանոնական աղօթքէ ետք Յայրիկ իջեւանեցաւ Ղուկասեաններու տունը:

Յայրիկ այցելեց նաեւ ռուսաց եկեղեցին եւ թուրքերու մզկիթը:

Իր խօսքը թուրքերուն ուղղելով Յայրիկ ըսաւ.

- Կրօնները Աստուծոյ աչքին առջեւ ծաղկեփունջ են, երբեմն մէկ ծաղկէն հոտ քաշէք, երբեմն միւսը: Դուք տարբեր հաւատքով եղբայրներ իրար քով կ'ապրիք եւ ատոր համար ալ իբրեւ մէկ երկրի գաւազներ պիտի լինէք հաշտ ու համերաշխ:

Շուշի տօնական տեսք ստացած էր եւ ամէն կողմ ժողովրդային ուրախութիւններ, հրախաղութիւն, ձիարշաւ եւ նուագածութիւն տեղի կ'ունենային:

Երկու օր Շուշիի մէջ հանգստանալէ ետք Յայրիկ իր քջախումով շրջագայութեան ելաւ դէպի Ամարասի վանք, Ճարտար, Գիշի, Նորշէն եւ Խրամորթ գիւղերը եւ հալչէն գաւառը կտրելով հասաւ Գանձասարի վանք: Վերադարձի ճամբուն վրայ ան այցելեց Առաջածոր, Մելիքշէն, Դաշբուլաղ (Այժմ՝ Աստղաշէն), Խնածախ եւ Խանքենոյ (այժմ՝ Ստեփանակերտ) գիւղերը եւ ամէնուրեք ժողովրդային սիրալի ընդունելութեան արժանացաւ:

Շուշի վերադառնալէն ետք, ի պատիւ Յայրիկի տեղի ունեցան հանրիսաւոր ճաշկերոյթներ: Յայրիկ այցելեց քաղաքին եկեղեցիները, քարոզեց եւ յարաբերութիւն հաստատեց ժողովուրդին հետ:

Դեռիւր գիւղի Տէր Եղիշէ քահանայ Տէր Մանուկեան Յայրիկի նուիրեց արաբական գեղեցիկ նժոյգ մը:

Շուշիէն հրաժեշտ առնելով Յայրիկ ուղղուեցաւ դէպի Դարաղշաղ (Բերդածոր): Գիւղացիք եկեղեցական թափօրով եւ աղ ու հացով դիմաւորեցին զինք: Թափօրին առջեւէն կը քալէին երկու եզներ, որոնց կոտոշներուն վրայ վառած մոմեր փակցուցած էին, իսկ երկու հոգի ալ կալէն հանուած ցորենը մազերու մէջ լեցուցած մօտեցան Յայրիկի:

Ալեհեր ծերունի մը արտասուաթոր աչքերով մօտեցաւ Յայրիկի եւ ըսաւ.

- Յայրիկ քան, ոտքդ դիրի մեր հողի վրայ, Աստուծու սիրտը կը քաղցրանայ մեր վրայ. օրինի՛ր այս ցորեն, օրինի՛ր այս մատաղցուն, որոնք այս օրուայ յիշատակի համար քեզ նուէր ենք բերել: Յայրիկ ինք ալ յուզուեցաւ, օրինեց եւ ճամբան շարունակեց: Չաբուղէն եւ Տեղէն անցնելով Յայրիկ հասաւ Գորիս, ուրկէ սեպտեմբեր 3-ին գնաց Տաթև, հոնկէ՝ Նոր, Գետաթաղ, Դարբաս, Ուզ (Ոյծ), Բնակորթ, Մազրա (Մուծք) եւ Սիսիանի լեռնանցքը կտրելով մտաւ Բիջանակ (Բջնակ) եւ հասաւ Նախիջեան քաղաքը:

Նախիջեանէն ճամբան շարունակելով Յայրիկ այցելեց Նորշէն, Դաւալու (այժմ՝ Արարատ գիւղ), Խոր Կիրապի վանք, Դամարլու (այժմ՝ Արտաշատ), իջաւ Չանգիբասար (Երեւանէն հարաւ, թրքաբնակ գօտին, որուն կերպով եւ Ուլուխանլու՝ Ներկայ Մասիս քաղաքը) եւ սեպտեմբեր 12-ին հասաւ Սուրբ Էջմիածն:

2019-Ի ՊԷՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՄԱՐԱԹՈՐԸ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱԻ
8 ՆՈՅՏԵՄԵՐ 2020-ԻՆ



Ինչպես ծանօթ է, սկզբունքով 10 նոյեմբեր 2019-ին պետք էր տեղի ունենար Պեյրուֆի միջազգային մարաթոնը՝ տարիներու սովորութեան համաձայն:

Սակայն Լիբանանի մէջ կատարուող ցոյցերուն եւ անկայուն կացութեան պատճառով մարաթոնը տեղի չունեցաւ, թէեւ կազմակերպիչ յանձնախումբը փորձեց զայն կայացնել քիչ մը աւելի ուշ՝ ճշդուած թուականէն շաբաթ մը ուշացումով:

Սակայն երբ կարելի չեղաւ անոր համար մօտալուտ թուական մը ճշդել, որոշուեցաւ 2019-ի այս մարաթոնը յետաձգել 8 նոյեմբեր 2020-ին:

Յայտարարուեցաւ նաեւ, որ բոլոր անոնք, որոնք մարաթոնին մասնակցութեան սակ վճարած են, դրամատուներու բնականոն գործունեութեան սկսումէն ետք կրնան վերստանալ իրենց գումարները:

Այս գծով մօտիկ ապագային պիտի յայտարարուին յաւելեալ մանրամասնութիւններ:

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

ՈՒԵՍԹՊՐՈՒՔ ԵՒ ՏՈՆՔԻՉ՝
ԹՐԻՓՐԸ ՏԱՊՐԸԻ
ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»-ի պասքէթպօլի ախոյեանութեան ծիրին մէջ երեկ կատարուած մրցումներուն արեւելեան շրջանի պարագլուխի դիրքին վրայ գտնուող Պոսթըն Սելթիքս արծանագրեց իր 11-րդ յաղթանակը, երբ իր դաշտին վրայ պարտութեան մատնեց Ֆենիքս Սանզը: Այս վերջինէն Տելիս Պուքըր նշանակեց 20 կետ:

Հիուսթըն Ռոքեթց 132-108 արդիւնքով յաղթեց իր հիւրին՝ Փորթլենտ Թրեյլ Պլեյզըրզին: Մրցումին ամենէն շատ կէտը նշանակեց Ռոքեթցէն Ճեյմս Յարտեն (36 կետ), մինչ անոր խմբակից Ռասըլ Ռեյսթարուք թրիփլը տապըլ մը իրագործեց (28 կետ, 13 ռիպաւնտ, 10 էսիսթ):



Ռասըլ Ռեյսթարուքը (աջին)

Իր կարգին, թրիփլը տապըլի հեղինակ դարձաւ Լուքա Տոնքիչ (42 կետ, 11 ռիպաւնտ, 12 էսիսթ), երբ անոր կազմը՝ Տալաս Մավըրիքս, 117-110 արդիւնքով յաղթեց իր հիւրին՝ Սան Անթոնիօ Սփըրզին: Այս վերջինէն Տեմար Տերոզան նշանակեց 36 կետ:



Լուքա Տոնքիչ

Լոս Անճելըս Բլիփըրզ 2 կետի տարբերութեամբ՝ 90-88 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց իր հիւրին՝ Օքլահոմա Սիթիին դէմ:

Ստորեւ կու տանք այսօր տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (փակագիծերուն մէջ նշուած են խումբերուն արձանագրած արդիւնքները, սկիզբը նշուած են յաղթանակները, ապա՝ պարտութիւնները):

Նիւ Օրլինզ (4-9) - Փորթլենտ Թրեյլ Պլեյզըրզ (5-9)
Մեմֆիս Կրիզլիզ (5-8) - Կոլտըն Սթըյթ Ուորիըրզ (2-12)
Սաքրամենթօ Զինկզ (5-7) - Ֆենիքս Սանզ (7-5)
Լոս Անճելըս Էյթըրզ (11-2) - Օքլահոմա Սիթի (5-7)

ԲԱԹԱՐ-2022-Ի ՄՈՆԻՏԻՆԸ ԵՒ ԶԻՆԱՍՏԱՆ - 2023-Ի ԱՍԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՐՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ
ԽՈՒՄԲԻՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ
ԶՅԱԶՈՂԵՑԱՆ ՅԱՂԹԵԼ ՔՈՐԷԱՅԻՆԵՐՈՒՆ



ԼՈՒՍՆԱԿԱՐԸ ՏՐԱՍԱՐԴԵՑ՝ ԱՏԱՆ ՀԱԺ ԱՆԻ

Յաջորդաբար երկրորդ մրցումն ըլլալով, Լիբանանի ֆութպօլի ազգային խումբը իր մրցումը կատարեց առանց իր համակիրներուն՝ դռնփակ, երկրին մէջ տիրող լարուած կացութեան պատճառով:

Զամիլ Շամունի անուան մարզական աւանին մէջ երեկ տեղի ունեցած այս մրցումին, Լիբանան յաջորդաբար երկրորդ մրցումն ըլլալով արձանագրեց 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը, այս անգամ՝ Հիւսիսային Զորեայի հետ: Նոյն արդիւնքը, նոյն մարզադաշտին վրայ արձանագրուած էր Հարաւային Զորեայի հետ, 14 նոյեմբերին:

Այս մրցումը կ'իյնայ Զաթար-2022-ի մոնտիպի եւ Զինաստան-2023-ի Ասիոյ ֆութպօլի ախոյեանութեան գտումի զոյգ մրցաշարքերուն ծիրին մէջ:

Լիբանանի մարզիկները չկրցան տպաւորիչ ելոյթ մը ունենալ, եւ այս հաւասարութեան պատճառով վերոնշեալ զոյգ մրցաշարքերու յաջորդ հանգրուանին տոմս մը ապահովելը բաւական դժուարացաւ:

Չտումի մրցումները կը վերսկսին 28 մարտ 2020-ին:

Ստորեւ կու տանք Ը. խմբակի դասաւորման պատկերը:

	ՄԻՑ.	Ց.	Հ.	Պ.	ԿԵՏ
1.- Թուրքմենիստան	5	3	0	2	9
2.- Հարաւային Զորեա	4	2	2	0	8
3.- Լիբանան	5	2	2	1	8
4.- Հիւսիսային Զորեա	5	2	2	1	8
5.- Սրի Լանքա	5	0	0	5	0

ՀԱՅՐԵՆԻ ԾԱՆՐԱԲԱՐՉՆԵՐԸ
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՆ

Յաջորդաբար երրորդ տարին ըլլալով, հայրենի ծանրաբարձները (ախոյեան եւ մետալակիր) պարգեւատրեց Ռուսիոյ մէջ բնակող հայ գործարար Ետկար Արամեան:



Այս անգամ բարերարը ծանրաբարձութեան աշխարհի Լորընտայ ախոյեան Յակոբ Սկրտչեանը պարգեւատրեց, «Թոյրթա Զորույլ» ինքնաշարժով: Իսկ ծանրաբարձներ Սիմոն Մարտիրոսեան, Ռուբէն Ալեքսանեան, ինչպէս նաեւ հաւաքականի գլխաւոր մարզիչ Փաշիկ

Ստացան
դրամական պարգեւներ:
Նախապէս ինքնաշարժներ ստացած էին նաեւ Ար-

թուր Ալեքսանեան, Մաքսիմ Մանուկեան եւ Սիմոն Մարտիրոսեան:

ՖՈՒԹՍԱԼ

ԱՐԱՐԱՏ - ԼԷՕ՝ 8-31

Նախանցեալ օր տեղի ունեցան Հայաստանի ֆութսալի «սուփըրլիկ»-ի 6-րդ հանգրուանի մրցումները: Արարատ, որ իր դաշտին վրայ հիւրընկալեց Լեոն 31-8 արդիւնքով քիչ մը ծանր պարտութիւն մը կրեց յայտնեց Հայաստանի ֆութպօլի ֆետերասիոնին պաշտօնական կայքը:

Արարատ - Արմենիա, որ հիւրընկալեց Եղվարդը, արձանագրեց 12-2 արդիւնքով յաղթանակ մը:

Այժմ Լեո եւ Արարատ - Արմենիա 12-ական կէտով առաջին դիրքին վրայ են: Բայց գործող ախոյեանը՝ Լեոն, մրցում մը նուազ կատարած է:

Արարատ եւ Եղվարդ ապահոված են 3-ական կէտ, մինչ Սիրիուս ցարդ ոչ մէկ կէտ կրցած է ապահովել:



ՓԼԱԹԻՆԻ. «ՎԱՐ»-Ը ԶՄԱՐԴԱՐԱՅՆԵՐ
ԻՆՔԶԻՆՔ»

«ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.»-ի նախկին նախագահ Միշել Փլաթինի անդրադարձաւ ֆութպօլի իրաւարարներուն կողմէ օգտագործուող «ՎԱՐ» համակարգին արդիւնաւետութեան:

««ՎԱՐ»-ը չի լուծեր ֆութպօլի առկայ խնդիրները, այլ միայն կը քողարկէ գաւոնը: Ես դեմ եմ այդ համակարգի օգտագործման, որովհետեւ անիկա չ'արդարացներ ինքզինքը», ըսաւ Փլաթինի:

«ՎԱՐ»-ի կողմէ ընդունուած ոչ բոլոր որոշումները լաւ ձեւով կ'ընդունուին ֆութպօլիստներուն եւ մարզիչներուն կողմէ:

Նախապէս անոր թերութիւններուն մասին խօսած էին նաեւ Եոսիփ Կուարտիլիա (Մանչեսթըր Սիթի), Մաուրիցիօ Սարի



(Ետլվենթուս) եւ Անթոնիօ Զոնթե (Ինթեր Միլան):

Այս համակարգը ֆութպօլի մէջ կ'օգտագործուի 2017-էն ի վեր:

ԵՒՐՕ-2020

ԿԱԼԵՍ ՀԱՆԴԻՍԱՑԱԻ
ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ
ՀԱՄԱՌՂ ՎԵՐՋԻՆ ԽՈՒՄԲԸ

Եւրոպայի ֆութպօլի ախոյեանութեան՝ Եւրօ-2020-ի գտումի մրցաշարքը երեկ գիշեր հասաւ իր աւարտին, երբ կատարուեցան վերջին տասը մրցումները՝ չորս տարբեր խմբակներու մէջ:

Գ. խմբակին մաս կազմող Գերմանիա եւ Հոլանտա անխնայ եղան իրենց հիւրերուն նկատմամբ՝ արձանագրելով 5 կոլի առաւելութեամբ՝ յաղթանակ եր: Առաջինը՝ Հիւսիսային Իրլանտայի դէմ (6-1), իսկ երկրորդը՝ Եսթոնիոյ դէմ (5-0):

Գերմանիայէն հետքիք մը իրագործեց Սերժ Կնապրի, մինչ Հոլանտայէն՝ Ճեորճինիօ Ուիթ-



Սերժ Կնապրի

նալտում: 5-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց նաեւ Ռուսիա՝ Սան Մարինոյի դաշտին վրայ:

Նոյն խմբակին մէջ (Թ. խմբակ), 6-1 արդիւնքով յաղթանակ արձանագրեց նաեւ Պելճիքա՝ Կիպրոսի դէմ:

Երեկուան մրցումներուն արդիւնքներուն լոյսին տակ, աւարտական հանգրուանին հասնող վերջին խումբը հանդիսացաւ Կալէս, որ 2-0 արդիւնքով յաղթեց Հունգարիոյ:



Խմբակներուն վերջնական դասաւորման կ'անդրադառնանք վաղուան մարզական էջով:

ՌՈՏՐԻԿԵՉ ՇՈՒՐՋ
6 ՇԱՐԱԹՈՎ ՊԻՏԻ
ԲԱՅԱԿԱՅԻ ԴԱՇՏԵՐԷՆ

Ռեալ Մատրիտի միջնապահ Խամես Ռոտրիկեզ վիրաւոր ըլլալուն պատճառով շուրջ 6 շաբաթով պիտի բացակայի ֆութպօլի դաշտներէն, յայտնեց մատրիտեան ակումբին պաշտօնական կայքը:

Ասիկա կը նշանակէ, որ քլումպիացին պիտի բացակայի 18 ղեկտեմբերին տեղի ունենալիք Պարսէլոնա - Ռեալ Մատրիտ «քլասիքօ»-էն, որ պիտի կատարուի Զաթալոնիոյ «Զամփ Լոս» մարզադաշտին վրայ:

Ան վիրաւորուեցաւ Զոլումպիոյ ֆութպօլի ազգային խումբին հետ իր կատարած փորձերուն ընթացքին:



ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸՏԻ
ՊԱՐՏՔԸ ԱՒԵԼՅԱԻ
140 ՄԵԼԻՈՆ ՓԱՌՆՏՈՎ



2019-2020 տարեշրջակի առաջին երեք ամիսներուն Մանչեսթըր Եունայթեդի պարտքը 140 միլիոն փաունտով աւելնալով ներկայիս հասած է 384,5 միլիոն փաունտի:

Անոր եկամուտի այս անկումին պատճառը այն է, որ խումբը չի մասնակցիր «Չեմփիօնզ լիկ»-ի ֆութպօլի մրցաշարքին:

Այդ երեք ամիսներուն ընթացքին մրցումներու սփռումին եկամուտը կազմեց 32,9 միլիոն փաունտ, ինչ որ 9,9 միլիոն փաունտով աւելի քիչ է նախորդ տարեշրջակին անոր եռամսեայ եկամուտէն:

Մանչեսթըր Եունայթեդ կը յուսայ, որ տարեշրջակի աւարտին անոր ընդհանուր եկամուտը կազմէ 560-580 միլիոն փաունտ: Անիկա նախորդ տարեշրջակին ունեցաւ 627,1 միլիոն փաունտի եկամուտ մը:

ԳԱՅԹԱԿՐՈՒԹՅՆ ԹԵՔԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻՆ ՄԷՋ

ԽՄԲԱԳԻՐԸ ՆԵՐՈՒՄ ՀԱՅՑԱԾ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՆԸ ԺԽՏՈՂ ՅՕԴՈՒՎԾԻ ՀԱՄԱՐ

Թրքական ընդդիմադիր «Կազեթ Տուվար» կայքին վրայ գայթակղութիւն տեղի ունեցած է՝ առնչուած «Չայերու աքսորը» վերնագիրով յօդւածի հրապարակման հետ:



«Կազեթ Տուվար»-ը յայտնի է իր ընդդիմադիր հայեացքներով. բացայայտ քննադատութեան կ'ենթարկուին թրքական իշխանութիւնները, կը խօսուի ազգային փոքրամասնութիւններու խնդիրի մասին, ներառեալ քրտական հարցի եւ Չայոց ցեղասպանութեան, եւ յօդուածներուն մէջ, ի տարբերութիւն թրքական այլ լրատուամիջոցներու, կոչ կ'ուղղուի հրաժարելու Չայոց ցեղասպանութեան ժխտման քաղաքականութենէ:

Ի հեճուկս այլ կայքերու, որոնց խմբագրութիւններուն մէջ Չայոց ցեղասպանութիւնը ժխտող յօդուածի համար շնորհակալութիւն պիտի յայտնէին, իսկ արտայայտելու եւ ընդունելու համար աշխատանքէ պիտի հեռացնէին, «Կազեթ Տուվար»-ի մէջ տեղի ունեցած է ճիշդ հակառակը:

«Կազեթ Տուվար»-ի խմբագիր Ալի Տուրան Թփուուզ կայքէն հեռացուցած է յօդուածագիր Կիւլկիւն Թիւրքօղլուի՝ «Չայերու աքսորը» վերնագիրով յօդուածը, որուն մէջ ան առանց ապացոյցներու կը նշէր, թէ Չամաշխարհային Ա. պատերազմի ընթացքին կատարուածը աքսոր էր, իսկ Չայոց ցեղասպանութեան փաստը ապացուցուած չէ:

Խմբագիր Թփուուզ յօդուածը կայքէն հեռացնելէ ետք հրապարակած է «Ներողութեան գրութիւն. ժխտողականութեան մերժում» վերնագիրով յօդուած մը, որուն մէջ մասնաւորաբար կը նշուի. «Կազեթ Տուվար»-ը ժխտողականութիւնը մերժող կայք է: Չայոց ցեղասպանութեան հարցին մէջ ալ նոյնն է: Կիւլկիւն Թիւրքօղլուի երէկուան յօդուածը չի համապատասխանէր մեր սկզբունքներուն եւ համոզումներուն: Երբեմն կարելի չ'ըլլար կարդալ բոլոր լրագրողներուն յօդուածները: Մենք տեղեկացուցած ենք լրագրողին, որ յօդուածը չի համապատասխանէր մեզի: Ի հարկէ, ամբողջ պատասխանատուութիւնը իմն է: Շատ կը ցաւիմ: Ներողութիւն կը խնդրեմ բոլորէն»:

Թիւրքօղլու իր թուիթթեան էջին մէջ քննադատած է «Կազեթ Տուվար»-ի այս մօտեցումն ու իր յօդուածը կայքէն հեռացնելու եւ, իր դիմումին համաձայն, ազատուած է աշխատանքէն:

Թփուուզի այս քայլը ողջունած են պոլսահայ մտաւորական, գրող Սեւան Նշանեան, թուրք փաստաբան, իրաւապաշտպան, Թուրքիոյ մարդու իրաւունքներու ընկերակցութեան փոխնախագահ Էրէն Քեչքին եւ ուրիշներ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԵՐԿՐՈՐԴ ...

Շարունակուած Ա. Էջէն

Խորհրդարանի 19 նոյեմբերի նիստին պատգամաւորներ Վարազդատ Կարապետեանի, Բաթէն Թունեանի եւ Նարեկ Չէլեալեանի առաջարկած «Նուազագոյն ամսական աշխատավարձի մասին» եւ «Պետական պաշտօններ եւ պետական ծառայութեան պաշտօններ զբաղեցնող անձանց վարձատրութեան մասին» Չայաստանի օրէնքներուն մէջ փոփոխութիւններ կատարելու մասին օրէնքներու նախագիծերու փաթեթը երկրորդ ընթերցումով ընդունուեցաւ միաձայնութեամբ՝ 100 թեր քուէներով:

Պատգամաւորները սկիզբը առաջարկած էին ամսական նուազագոյն աշխատավարձը բարձրացնել մինչեւ 63.000 դրամ: Սակայն հարցը կառավարութեան մէջ քննարկելէ ետք գործադիրը առաջարկած էր նուազագոյն աշխատավարձը դարձնել 68.000 դրամ: Իբրեւ արդիւնք Ազգային ժողովի տնտեսական հարցերու յանձնախումբը առաջարկը քննարկելէ ետք թեր քուէարկեց նուազագոյն աշխատավարձը 68.000 դարձնելու տարբերակին:

Ամսական նուազագոյն աշխատավարձը 68.000 դրամ դարձնելու պարագային պիտի բարձրանան մօտ 57.000 պետական ծառայողներու եւ մասնաւոր հատուածի մօտ 130 հազար աշխատողներու աշխատավարձերը: Կարապետեան վստահեցուց՝ ծախսերու ու հարկերու ազդեցութեան հաւորգումարին իբրեւ արդիւնք պետական պիտօճէին վրայ մաքուր ազդեցութիւնը 2 միլիար մ դրամէն աւելի չէ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԸՆՏՐԵՑ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԿԱՆԻՐԱԳԻԼՄԱՆ ՁԱՆՁԱՆԱԽՈՒՄԻ 5 ԱՆԴԱՄՆԵՐԸ

Չայաստանի Ազգային ժողովը փակ եւ գաղտնի քուէարկութեամբ ընտրեց Փտածութեան կանխարգիլման յանձնախումբի անդամները: 19 նոյեմբերին տեղի ունեցած ընտրութիւններուն արդիւնքները խորհրդարանի նիստին ներկայացուց Ազգային ժողովի Չաշուիչ յանձնախումբի նախագահ Վահագն Յովակիմեան:

Փտածութեան կանխարգիլման յանձնախումբի անդամներուն ընտրութեան համար մեկական թեկնածուներ առաջարկած էին Չայաստանի կառավարութիւնը, Ազգային ժողովի «Իմ քայլը», «Բարգաւաճ Չայաստան», «Լուսաւոր Չայաստան» խմբակցութիւնները եւ Բարձրագոյն դատական խորհուրդը:

Չայաստանի կառավարութեան կողմէ իբրեւ թեկնածու առաջադրուած Լիլիթ Ալեքսանեան Փտածութեան կանխարգիլման յանձնախումբի անդամ ընտրուած է 85 թեր, 15 դեմ քուէներով, «Իմ քայլը» խմբակցութեան թեկնածու Էտկար Շաթիրեան՝ 96 թեր, 6 դեմ ձայներով, «Բարգաւաճ Չայաստան» խմբակցութեան թեկնածու Նարեկ Չամբարձումեան՝ 71 կողմ, 31 դեմ ձայներով, «Լուսաւոր Չայաստան» խմբակցութեան թեկնածու Չայկուիի Յարութիւնեան ընտրուեցաւ 90 կողմ, 12 դեմ ձայներով:

Չայաստանի Բարձրագոյն դատական խորհուրդի թեկնածուն՝ Արամայիս Փաշինեան, ընտրուեցաւ 85 կողմ, 16 դեմ ձայներով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆԸ

ԹՐԱՄԺԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՄԷՋ ԻՄԱՐԱՅԷԼԵԱՆ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ ԿԸ ՆԿԱՏԷ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԷՆՔԸ ՉԽԱՆՏՈՂ»

Միացեալ Նահանգներու նախագահ Տաւըլտ Թրամփի վարչակազմը վերատեսութեան կ'ենթարկէ Պաղեստինի տարածքին մէջ իսրայելեան բնակեցման վայրերու օրինականութեան վերաբերեալ ամերիկեան դիրքորոշումը եւ անոնց գոյութիւնը այլեւս միջազգային օրէնքին հակասող չի նկատեր: Այս մասին յայտարարեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեօ:

«Նախագահ Տանըլտ Թրամփի վարչակազմը վերատեսութեան կ'ենթարկէ Պարաք Օպամա-յի վարչակազմի իսրայելեան բնակեցման վայրերուն հարցին մէջ մօտեցումը: ԱյսրորդաՆանի մէջ իսրայելեան բնակեցման վայրերու կառուցումը միջազգային օրէնքի խախտում չէ», ըսած է ամերիկեան դիւանագիտութեան պետը:

Ան մամլոյ ասուկիսի մը ընթացքին ընդգծած է, որ Միացեալ Նահանգներ իր դիւանագիտական միջոցներով պիտի նպաստէ պաղեստինեւիսրայելեան տագնապի խաղաղ լուծման:

Յիշեցնենք, որ Իսրայելի կառավարութիւնը սեպտեմբերին Իսրայելի վարչապետ Պենիափին Նեթանիահուի՝ Այսրորդանանի վրայ Իսրայելի գերիշխանութիւն տարածելու ծրագիրի ծիրին մէջ որդեգրած էր Յորդանանի հովիտին մէջ իսրայելեան բնակեցման վայրեր կառուցելու որոշումը:

Փոմփեյոյի յայտարարութենէն ետք Նեթանիահու հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի հետ եւ նշեց, որ վերջինս «սրբագրած է պատմական անարդարութիւն»:

Իսրայելի վարչապետը «Թուիթթըր»-ի վրայ գրեց. «Ես հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած եմ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի հետ եւ ըսած, որ ան սրբագրած է պատմական անարդարութիւնը: Մեկը պետք էր



ըսեր յստակ ճշմարտութիւնը, եւ Թրամփի վարուեցաւ այնպէս, ինչպէս Կոլանի բարձունքներու ճանաչման եւ Միացեալ Նահանգներու դեսպանատունը Երուսաղէմ տեղափոխելու ժամանակ»:

Նեթանիահու նշեց, որ իրենք «օտար հողի վրայ չեն գտնուիր», եւ ատիկա անելի քան 3000 տարի է, որ հրեաներու հայրենիքն է, իսկ Միացեալ Նահանգներու քայլը, ըստ Իսրայելի վարչապետին, պիտի նպաստէ շրջանին մէջ խաղաղութեան հաստատման:

Պաղեստինեան իշխանութիւնը Ուաշինկթընի յայտարարութիւնը նկատեց «անվաւեր, մերժելի, դատապարտելի եւ միջազգային օրէնքին ամբողջովին հակասող»՝ անէլցնելով, որ ամերիկեան վարչակազմը որեւէ իրաւունք չունի իսրայելեան բնակեցումին որեւէ օրինականութիւն շնորհելու:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ Այսրորդանանի մէջ իսրայելեան բնակեցման վայրերը անօրինական են եւ կը հակասեն միջազգային օրէնքին:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Չաոււշօղլու յայտնեց. «Միջազգային օրէնքէն վեր եղող պետութիւն գոյութիւն չունի»:

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ ԿԻՍՈՎ ՉԱՓ ՋՈՒՐԻ ՏԱԿ ԱՆՑԱԾ Է ՊԱՆՔՍԻԻ՝ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԲԱՃԿՈՆՈՎ ԵՐԵՒԱՅԻ ԿՐԱՅԻԹԻՆ

Վենետիկի մէջ կիսով չափ ջուրի տակ անցած է բրիտանացի յայտնի նկարիչ Պանքսիի՝ փրկարարական բաճկոնով երեխայի **կրաֆիթիւն**: Ըստ «Երկիր»-ին, այս մասին կը հաղորդէ «Մի.Էն.Էն.»-ը:

Կրաֆիթիւն կը գտնուի Զամփօ Սանթա Մարկերի-թայի տուներէն մէկուն պատին վրայ:

Ջուրի տակ անցած ստեղծագործութիւնը լուսանկարած է Անթոնիօ Ռենսնա:

Ան ամերիկեան լրատ-



ամիջոցի հետ գրոյցի ընթացքին յայտնած է, որ ջու-

րին մակարդակը հասած է 153 սանթիմետրի:

	ԱՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 Էւ 95 MHz
7.00 Զայլերգներ / Բարի լոյս 7.15 Սփիւռքեան հանդարտ երգեր 7.30 Երկու բարեւ 8.30 Լուրեր 9.00 Երկու բարեւ 10.00 Խանդավառ երգեր 10.30 Չայկական աշխարհի լուրեր 10.45 Երգային քաղաքականութիւն 11.00 Նոր երգեր 11.30 Չուզերգներ 12.00 Բաւերու աշխարհ 12.30 Արդի մշակումով ժողովրդային երգեր 1.00 Ազգային-հայրենասիրական երգեր 1.30 Լուրեր 2.00 Յիշատակելիները 2.05 Յեղափոխական երգեր 3.00 Զըլ ետմ պիլոմու 4.00 Չայկական ռազմարուեստ 4.20 Կի Մանուկեանի եղանակներ 4.30 OTV-ի հայերէն լուրերու ուղղակի սփռում	4.50 Սփիւռքեան խանդավառ երգեր 5.00 «Վանայ Զայն»-ը երեկոյեան 5.30 Չանդիպում 6.30 Լուրեր 6.50 «Երգ երգոց»-ի կատարումներ 7.30 Յիրանի (Նիթ)՝ Կիլիկեան մանրանկարչութիւն 8.00 Օրուան երգիչ (Էլի Պերպէրեան) 8.30 Լիբանանահայ երգիչներու կատարումներ 9.30 Չայկական աշխարհի լուրեր (կրկ.) 9.45 Չայլենի սիրուած երգեր 10.30 Աշուղական երգեր 11.00 Golden Oldies 12.00 Յեղափոխական երգեր 2.00 Չայերէն այլազան երգեր 3.00 Կրկնութիւններ 5.00 Չայերէն այլազան երգեր 6.00 Չայկական երաժշտութիւն
«Վանայ Զայն»-Էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնդրել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժինին մէջ (voiceofvan.net):	

«ԹՐԱՄԺ ԱՆՉԱՄԲ ՅԱՆՉՆԱՐԱՐԱԾ Է ՍԱՌԵՑՆԵԼ ՈՒՔՐԱՆԻՈՅ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ»

Կ'ԸՍԷ ՅԷՅԼ

Ուքրանիոյ տրամադրուող ելեւմտական եւ գինուորական աջակցութեան սառեցումը անձամբ Միացեալ Նահանգներու նախագահ Տաւըլտ Թրամփի նախաձեռնութիւնը եղած է:

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին Միացեալ Նահանգներու Քոնկրեսի Ներկայացուցիչներու տան մէջ փակ լսումներու ժամանակ յայտարարած է արտաքին գործոց նախարարի քաղաքական հարցերով տեղակալ Տեյվիտ Յէյլ:

Լսումներու տղագրութիւնը հրապարակուած է 18 նոյեմբերին, իսկ Նիստը տեղի ունեցած է ամսուան սկիզբը: Լսումներու ընթացքին դիւանագետը ցուցմունք տուած է Ներկայացուցիչներու տան երեք յանձնախումբի անդամներուն Միացեալ Նահանգներու նախագահի պաշտօնանկութեան հոլովոյթի ծիրին մէջ:

Յէյլի համաձայն, Թրամփ Սպիտակ տան վարչապիւտճեական վարչութեան ցուցմունքներ տուած է Ուքրանիոյ աջակցութեան տրամադրման հոլովոյթը սառեցնելու:

Յէյլ նշած է, որ 23 յուլիսին արտաքին քաղաքականութեամբ զբաղող Միացեալ Նահանգներու առանցքային նախարարութիւններու ղեկավարներու տեղակալներու մակարդակով քննարկում տեղի ունեցած է: Այդ քննարկումին ժամանակ Միացեալ Նահանգներու նախագահի՝ ազգային անվտանգութեան հարցերով օգնականի տեղակալ Չարլզ Կափիերման իւրաքանչիւր գերատեսչութեան ներկայացուցիչին հարցուցած է նշուած հարցին վերաբերեալ ունեցած դիրքորոշումին մասին:

«Ես վճռականօրէն հանդէս եկած եմ յօգուտ աջակցութեան վերականգնման. այսպիսի դիրքորոշում ունէին Նաեւ միւս նախարարութիւններու ներկայացուցիչները, բացի վարչապիւտճեական վարչութենէ: Վարչութեան ղեկավարը բացատրած է, որ իրենց դիրքորոշումը պայմանաւորուած է Թրամփի ցուցմունքներով», պատմած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի տեղակալը:

Յիշեցնենք, որ 29 օգոստոսին յայտնի դարձած էր Թրամփի՝ Ուքրանիոյ տրամադրուող ամերիկեան աջակցութիւնը վերատեսութեան ենթարկելու մտադրութեան մասին:

ՀՅԳ ՀԵՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՆԸ

Շարունակուած Ա. Էջէն

Երեկ լրացել է օրէնքով սահմանուած ժամկետը, որը նախատեսուած էր գրաւոր հարցումին պատասխան ստանալու համար: Մենք պատասխան ենք ստացել միայն Չայաստանի Յատուկ քննչական ծառայութիւնից եւ գլխաւոր դատախազութիւնից՝ առ այն, որ իրենք նման բովանդակութեամբ որեւէ հարցում չեն ստացել կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութիւնից:

Այս փաստը կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարի կողմից վարչուող անպատասխանատու եւ խորքային հարցերը ձեռնաձուլեան ենթարկելու քաղաքականութեան եւս մէկ վկայութիւնն է:

ՔԱՀԼ-Ի ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏԱՆ

Սալբի, Մարալ եւ Ստեփան Տօնէլեաններ օրդ. Ադաւի Տօնէլեանի յիշատակին կը նուիրեն 500 տոլար:

	ԱՖՀԻԼ ARMENIAN MUTUAL FUND			
Since 1998				
20 Years of Commitment				
The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others				
Mahatma Gandhi				
				
Health Insurance	Travel Insurance	Good Care Clinic	Car Insurance	Health Clubs
				
Home Medical Equipment	BOB - Western Union	University and Student Fund	«ԳՈՅՑ» Health Magazine	
www.afhil.com AFHIL Mutual Fund Bourj Hammoud, Arin Center, 4 th Floor Tel. 01 242 556/7				